ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01-ը մարտի 2016թ.

Քաղաք Իջևան

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**2016 թվականի մարտի 1-ին ժ.11$^{00}$-ին կայացած**
**ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի**

1. **Հաշվետվություն՝ 2015թ. ՀՀ Տավուշի մարզում կատարված աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին**

/զեկ. Հ.Աբովյան – ՀՀ Տավուշի մարզպետ/

2. **ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2015թ. Կատարած աշխատանքների և 2016թ. Հիմնախնդիրների մասին**

/զեկ.Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**01.03.2016թ.**

**ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.
Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:
Նիստին մասնակցում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանը:
Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. **Հաշվետվություն՝ 2015թ. ՀՀ Տավուշի մարզում կատարված աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին**

/Զեկ.՝ Հ. Աբովյան – ՀՀ Տավուշի մարզպետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը ղեկավարվելով համապատասխան իրավական ակտերով և հիմք ընդունելով 2012-2015թթ. Մարզային զարգացման ծրագրի և կանոնադրության պահանջները 2015թ կարողացել է ամբողջությամբ իրականացնել մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված գործառույթները:

2015թ. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի էլեկտրոնային համակարգով մուտքագրվել է 12233 փաստաթուղթ և առաքվել է 7526 ելից փաստաթուղթ:

Մարզպետի կողմից կայացվել է 227 որոշում, արձակվել 78 կարգադրություն: Կայացել է մարզխորհրդի 4 նիստ և մարզպետի մոտ հրավիրված 24 խորհրդակցություն:

Հաշվետու տարում ստացվել է 2637 դիմում, 9509 գրություն, ՀՀ կառավարության և վարչապետի 87 որոշում, ապահովվել դրանց մուտքագրումը, հաշվառումը: Վերահսկվել է կատարման ընթացքը և սահմանված ժամկետներում պատասխանների առաքումը:

Քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան քաղաքներում, որին մասնակցել են 387 քաղաքացիներ՝ Իջևան-185,Դիլիջան-31,Բերդ-62,Նոյեմբերյան-109:

Աշխատակազմի 25 քաղաքացիական ծառայողներ 'Քաղաքացիական ծառայության մասին' օրենքի պահանջների համապատասխան ատեստավորվել են, իսկ 26 քաղաքացիական ծառայողներ գործուղվել և իրենց հերթական վերապատրաստումն են անցել յոթ ուսումնական հաստատություններում:

Աշխատակազմի 11 քաղաքացիական ծառայողներ ստացել են համապատասխան դասային աստիճան, իսկ գլխավոր և առաջատար պաշտոն զբաղեցնող 2 քաղաքացիական ծառայողների շնորհվել է պաշտոնի անձնագրով սահմանված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

6 թափուր պաշտոնի համար անց է կացվել մրցույթ, իսկ 4 ժամանակավոր թափուր պաշտոնների զբաղեցման համար կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հաշվետու տարում աշխատանքից ազատվել են 4 քաղծառայողներ, աշխատանքի են ընդունվել 9 քաղծառայողներ և սպասարկման ոլորտի աշխատողներ:

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և միջազգային կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների համակարգված համագործակցությունների արդյունքում 2015թ. ապահովվել է տնտեսության տարբեր ճյուղերի բնականոն զարգացման ընթացքը :

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 27.12.2014թ. թիվ 282-Ա <<Վարչական հսկողության 2015թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> հրամանով նախատեսվել և ըստ եռամսյակների սահմանված գրաֆիկով իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 21 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Հսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերջին տարիներին մարզպետարան-համայնքների ղեկավարների աշխատակազմեր համագործակցությունը դրական արդյունք է տվել: Մասնավորապես. բարձրացել է համայնքային ծառայողների իրավական գրագիտությունն ու պատասխանատվությունը:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում նկատվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Չնայած նրան, որ բազմիցս համայնքների ղեկավարներին տրվել են գրավոր զգուշացումներ համայնքներում տրվող շինթույլտվությունների և ավարտական ակտերի օրինակները մարզպետարան ներկայացնելու համար, սակայն ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91-Ն և 626-Ն որոշումների կարգը մարզի համայնքների մի մասում դեռևս չի պահպանվում:

2015թ. տեղի են ունեցել <<Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների>> և <<Համայնքների խոշորացման>> հանրաքվեներ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ (Խաշթառակ, Իջևան, Վարագավան, Ակնաղբյուր և Ներքին Ծաղկավան համայնքի ղեկավարի, Խաշթառակ, Սարիգյուղ, Պառավաքար, Իջևան և Գետահովիտ՝ համայնքի ավագանու), որոնք անցել են կազմակերպված և բարձր մակարդակով, դիմում-բողոքներ չեն եղել:

ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 29.12.2015թ.-ի դրությամբ համայնքային ծառայողների փաստացի թիվը 318-է, որից 60-ը զբաղեցնում են համայնքային ծառայության գլխավոր, 60-ը առաջատար և 198 կրտսեր պաշտոններ:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի պահանջի համաձայն մարզի 71 համայնքային ծառայողներ ս/թ հունիսի 15-ից հուլիսի 9-ը Իջևան, Բերդ, Դիլիջան և Նոյեմբերյան քաղաքներում, չորս խմբերով, անցել են վերապատրաստման դասընթացներ: Գործընթացում ներգրավված են եղել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված դասընթացավարներ:

Դասընթացներն անց են կացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված վերապատրաստման ծրագրից բխող դասացուցակներին համապատասխան:

Վերապատրաստված չորս խմբերը կազմված են եղել 18 մասնակիցներից:

Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն, և արդյունքները ժամանակին ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը.տեղադրվել են www.azdarar.am և մարզպետարանի ինտերնետային կայք-էջերում,փակցվել են Տավուշի մարզպետարանի հայտարարությունների վահանակի վրա, և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել հայտարարված մրցույթների ժամանակացույցը:

2015թ ընթացքում << Տավուշի մարզի համայնքների ղեկավարների որոշումներով նշանակվել են աշխատակազմերի համայնքային ծառայողների ատեստավորումներ և համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթներ: 35 համայնքներում ատեստավորվել են 90 համայնքային ծառայողներ, 28 համայնքներում հայտարարվել են 47 թափուր պաշտոնների համար մրցույթներ, որոնցից 31-ը կայացել են, իսկ 16-ը չեն կայացել համապատասխան թեկնածուներ չլինելու պատճառով:

2015թ. հոկտեմբերի 13-ից- 24-ը ուսումնասիրություններ են կատարվել մարզի Կողբի, Պտղավանի, Հաղթանակի, Բագրատաշենի, Ակնաղբյուրի, Լուսահովիտի, Ջուջևանի, Զորականի և Դիտավանի գյուղապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ և անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնելու նպատակով:

Ուսումնասիրությունների արդյունքում << տարածքային կառավարման նախարարության համայնքային ծառայության հարցերով վարչության կողմից ներկայացվել է զեկուցագիր, որտեղ մանրակրկիտ վեր են հանվել թերություններն ու բացթողումները:Զեկուցագրում նշված թերությունները քննարկվել են համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ,որոնք սահմանված ժամկետներում վերացվել են, և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է << տարածքային կառավարման նախարարություն:

<< Տավուշի մարզի համայնքներում աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Սահմանված կարգով և ժամկետում համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների գրառվում է էլեկտրոնային գրանցամատյանում:

## ՖԻՆԱՆՍՆԵՐ

Մարզպետարանի ապարատի պահպանման, մարզային ենթակայության կազմակերպություններին, համայնքներին և այլ ծրագրերով << 2015թ. պետական բյուջեից փաստացի ֆինանսավորումը կազմել է 8,811,737.1 հազ.դրամ:

| | 2013թ. ֆինանսավորում /հազ. դր./ | 2014թ. ֆինանսավորում /հազ. դր./ | 2015թ. ֆինանսավորում /հազ. դր./ |
|---|---|---|---|
| Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում | 252,798.4 | 336,541.7 | 493,455.7 |
| Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում | 0.0 | 0.0 | 2,546.5 |
| Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ | 0.0 | 0.0 | 258.9 |
| Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին | 0.0 | 31,840.9 | 229,504.0 |
| << սահմանամերձ համայնքների ընտանիք. բնական գազի,էլ.էներգիայի,ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհ.և գույքահարկի | 0.0 | 0.0 | 408,425.8 |

| | | | |
|---|---|---|---|
| հողի հարկի փոխհատուցում | | | |
| Պետական աջակցություն ՀՀ Տավուշի մարզի Բարեկամավան համայնքին | 0.0 | 0.0 | 354.0 |
| Պետական աջակցություն ՀՀ Տավուշի մարզի Դովեղ համայնքին | 0.0 | 0.0 | 331.0 |
| Այլընտրանքային ծառայություն | 0.0 | 0.0 | 660.0 |
| Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում | 72,858.0 | 56,953.2 | 64,055.8 |
| Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում | 0.0 | 203,517.8 | 0.0 |
| Մշակութային միջոցառումների իրականացում | 3,442.1 | 3,442.1 | 3,442.1 |
| Հանրակրթական ուսուցում | 3,251,997.7 | 3,470,300.6 | 3,664,634.8 |
| Կրթական օբյեկտների հիմնանորոգում | 0.0 | 103,997.2 | 0.0 |
| Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում | 25,593.7 | 40,788.7 | 56,014.6 |
| Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում | 1,467.2 | 1,579.3 | 1,695.9 |
| Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում | 0.0 | 4,994.6 | 5,045.5 |
| Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | - | 290,231.9 | 162,169.0 |
| ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցներ | 703,248.4 | 249,823.7 | 1,617,878.2 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 4,311,405.5 | 4,794,011.7 | 6,710,471.8 |
| Դոտացիա համայնքներին | 1,661,807.7 | 1,924,511.4 | 2,101,265.3 |
| Ընդամենը հանրագումար | 5,973,213.2 | 6,718,523.1 | 8,811,737.1 |

ՀՀ 2015թ. պետական բյուջեով մարզին նախատեսված գումարները հատկացվել են սահմանված ժամկետներում և ՀՀ կառավարության կողմից սահմանված համամասնություններին համապատասխան: ՀՀ պետական բյուջեից մարզային ենթակայության կազմակերպություններին և համայնքներին հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ իրականացվել է վերահսկողություն:

ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2015թ. թվականի գլոբալ բյուջեի տարեկան ճշտված ծավալը կազմել է 1550226.7 հազար դրամ: 2015թ դեկտեմբերի 15-ի դրությամբ ընկերությունների կողմից ներկայացված կատարողականներից ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ Տավուշի մարզային կենտրոնի կողմից ընդունվել է 1521445.3 հազար դրամը, որի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 1521445.3 հազար դրամ /**հավելված 1/**:

Մարզի համայնքների տեղական բյուջեների եկամուտները 2015թ նախատեսվել է 3541.5 մլն դրամ, որի դիմաց կատարողականը կազմել է 98.6 %: Գումարային արտահայտությամբ բացարձակ աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմում է 641.9 մլն դրամ:

Սեփական եկամուտները նախատեսվել է 710.4 մլն դրամ, որի կատարողականը կազմել է նախատեսվածի 94.5 %-ը, այդ թվում.

հողի հարկ- նախատեսվել է 183.1 մլն. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 160.6 մլն. դրամ, կամ կատարվել է 87.7 %-ով,

գույքահարկ- նախատեսվել է 255.2 մլն. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 260.3 մլն. դրամ, կամ կատարվել է 102.0 %-ով,

պետական տուրքեր- նախատեսվել է 19.4 մլն. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 18.0 մլն. դրամ, կամ կատարվել է 93.1 %-ով,

տեղական տուրքեր- նախատեսվել է 37,8 մլն. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 36.3 մլն. դրամ, կամ կատարվել է 96.0 %-ով,

գույքի վարձակալությունից մուտքեր- նախատեսվել է 99.8 մլն. դրամ, որի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 88.6 մլն. դրամ, կամ կատարվել է 88.8 %-ով:

2015 թ. << Տավուշի մարզի համայնքների բյուջեների եկամուտների ամփոփ ցուցանիշները ներկայացված են ***հավելված 2-ում: Հավելված 3-ում*** ներկայացված են մարզի 62 համայնքների սեփական եկամուտները հինգ հարկատեսակների գծով (հողի հարկ, գույքահարկ, պետական տուրքեր, տեղական տուրքեր, գույքի վարձակալությունից մուտքեր):

Մարզի համայնքները ընթացիկ տարվա աշխատավարձերը վճարել են առանց ուշացումների: 01.01.2016 թ. դրությամբ << Տավուշի մարզի համայնքների կողմից աշխատավարձի գծով պարտքեր չկան ( ***հավելված 4 ):***

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

<< Տավուշի մարզում գրանցված են ավելի քան 150 արտադրական և 1145 առևտրային ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են <<Քարարտ>> ՓԲԸ, <<Իջևանի բենտոնիտ>> ԲԲԸ,Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը, <<Իջևանի գինու կոնյակի գործարան>> ԲԲԸ, <<Դիլիջանի հանքային ջրերի գործարան>> ԲԲԸ, <<Էկոգարդեն>> ՍՊԸ, <<ՏավուշՏեքստիլ>>ՍՊԸ և այլն:

Մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 16800 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է մոտ 2200 մարդ, իսկ ծառայություններում՝ մոտ 14600 մարդ:

Վերջին տարիներին մարզում գործարար միջավայրի որոշակի բարելավումներ են նկատվում: Հատկանշական է Տավուշտեքստիլի մուտքը Հայաստան, որն իր գործունեությունը ծավալում է սահմանամերձ Չորաթան և հարակից համայնքներում: Արտադրությունը լուծում է հատկապես կանանց զբաղվածության խնդիրը և աճման միտումներ ունի: Նշված արտադրությունը սահմանամերձ համայնքներին հարկային արտոնությունների տրամադրման արդյունքն է: որտեղ ներկայումս աշխատում են ավելի քան 120 Տավուշցիներ:

Մարզպետարանի և ՓՄՁ ՀԱԿ-ի համագործակցությամբ 2015 թ-ին իրականացվել են 3 սկսնակ գործարարների դասընթացներ, որից 2-ը Նոյեմբերյանի տարածաշրջանում, 1-ը Դիլիջանի: Յուրաքանչյուր դասընթացին մասնակցել է 20 հոգի, որի արդյունքում հաստատվել է 26 գործարար ծրագիր, որից առ այսօր ֆինանսավորվել է 26-ը:

4 ջերմոցագործի և 2 սառնարանային գործունեությամբ զբաղվողի Տրամադրվել է դրամաշնորհ / սարքավորման տեսքով, մինչև 600.000 դրամ արժողությամբ/: Ֆինանսավորված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 80 մլն.դրամ:

Գործարարության աջակցության հարցերով զբաղվող կառույցների գործունեության խթանման և համատեղ միջոցառումների իրականացման առումով մարզպետարանը շարունակել է համագործակցել ՓՄՁ ՀԱԿ-ի մարզային մասնաճյուղի, ԱԱՊ-ի մարզային մասնաճյուղի, միջազգային մի շարք կազմակերպությունների/GIZ, USAIDI, UNDP ,Վորդ-Վիժն, ՀՕՖ-ի, IFAD-ի և այլն/ ՀԿ-ների, բանկերի և ՏԻՄ ղեկավարների հետ: Իրականացվել են մի շարք համատեղ միջոցառումներ, մասնավորապես՝ 2016-2019 թթ. մարզային զարգացման ծրագրի՝ արդյունաբերության, մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման և գործարար ծրագրերի մշակման, մարզային ավանդական ցուցահանդեսների կազմակերպման ուղղությամբ: Հատկանշական է Դիլիջանում կայացած գորգերի փառատոնը, Բերդի մեղրի փառատոնը ինչպես նաև Ենոքավանում մեկնարկած Հայբույս փառատոնը որոնց մասնակցում էին հանրապետության ավելի քան 300 արտադրողներ ու գործարարներ:

2015թ. ՓՄՁ ՀԱԿ-ի հետ համագործակցելով իրականացվել է համայնքների տնտեսական ինդեքսավորում, որի մեջ մտել են 2000 և ավելի բնակիչ ունեցող համայնքները: Ի հայտ են բերվել մրցակցային առավելությունները և անց է կացվել մանրամասն հետազոտություն: PACA ծրագրի շրջանակներում իրականացվել է << Մրցակցային առավելությունների մասնակցային վերլուծություն>>, որի արդյունքում Զորական և Հաղթանակ համայնքներում կառուցվել են ոռոգման ջրագծեր:

Համագործակցության արդյունքում դասընթացներ են անցկացվել կուտակային վճարների մասին /80 մասնակից/, հարկային փոփոխությունների մասին /45 մասնակից/, կանանց գործարարության աջակցության մասին / 15 մասնակից/: Ընթացիք տարում տեղեկատվական աջակցություն են ստացել 919 դիմորդ / հարկային փոփոխությունների, բանկային գործառույթների, վարկային խնդրիների վերաբերյալ /:

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացմանը նպաստելու ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները. ՓՄՁ ՀԱԿ Տավուշի մարզային կազմակերպության կողմից սահմանված կարգով մարզպետարան է ներկայացվել 2015թ. ծրագիրը, որը մարզպետարանի կողմից տրամադրվել է մարզի բոլոր համայնքներին:

Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ-ի Տավուշի մասնաճյուղի կողմից ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն է տրամադրվել իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների, պահանջվող հումքի, նյութերի, սարքավորումների, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների, տեղեկատվության որոնման և տրամադրման, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների որոնման ու կապերի հաստատման ուղղություններով, որոնց մասին տեղեկատվություններ են տեղադրվել մարզպետարանի կայքում:

2015թ բնակչության սպառողական ապրանքների պահանջարկը գլխավորապես բավարարվել է խանութների, սպառողական ապրանքների շուկաների և կրպակների միջոցով:

<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և << տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հանձնարարականի մարզի 62 համայնքներից 48-ում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է 776 ստուգումներ որից՝ 653 առևտրի, 78 հանրային սննդի և 45 կենցաղային ծառայությունների օբյեկտներում: Արդյունքում արձանագրվել են խախտումներ և սահմանված կարգով նշանակվել 200000 դրամ տուգանք, գանձվել՝ 130000 դրամ: Տեղեկատվությունը ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել է << տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Համայնքներում ոլորտի պատասխանատու մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ վարչական վարույթի իրականացման, տուգանքների նշանակման և գանձման թեմաներով, ինչպես նաև առևտրի և ծառայությունների մասին օրենքի դրույթների կատարումն ապահովելու նպատակով:

2015թ. մարզպետի կողմից կիսամյակային և տարեկան կտրվածքներով շրջաբերականներ է ուղարկվել մարզի 62 համայնքների ղեկավարներին: Համայնքներից բարձրացված խնդիրների վերաբերյալ մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից տրվել են մեթոդական ցուցումներ, կատարվել անհրաժեշտ պարզաբանումներ:

2015թ. մարզում ավելի քան 200 նոր մշտական և ժամանակավոր աշխատատեղ է բացվել ջերմոցային տնտեսություններում և արտադրության ոլորտում: Հատկանշական է Օքսֆամի կողմից իրականացվող ծրագրերը որի կողմից իրականացվող ներդրումները կշարունակվեն նաև 2016թ:

Զբոսաշրջության զարգացման նպատակով հիմնանորոգվում է Վարագավանքը: Հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր ուղղված մարզում տուրիզմի զարգացմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության տուրիզմի վարչության հրահանգներով և համագործակցելով մի շարք ՀԿ-ների հետ կազմակերպվել են տարբեր թեմաներով սեմինար քննարկումներ, որոնց արդյունքում ակնհայտորեն բարձրացել է մարզում տուրիզմի ոլորտի պատասխանատուների գիտելիքների մակարդակը:

Մասնավորապես. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների վերաբերյալ տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

Բազաների թարմացման նպատակով մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզում գործող հյուրանոցային տնտեսությունների և նրանց ունեցած հզորությունների մասին:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110779.4 հա, որից՝

| | |
|---|---|
| վարելահող | -25300.6 հա |
| բազմամյա տնկարկներ | – 3755 հա ,որից՝ |
| խաղողի այգիներ | -1355 հա, |
| պտղատու այգիներ | -2400 հա |
| խոտհարքներ | – 9274.5 հա |
| արոտավայրեր | – 63194.3 հա |
| այլ | – 10806.6 հա |

25300.6 հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18090 հա փաստացի վարելահողից 2015թ. ցանքի տակ է դրվել 16418 հա/ կամ 90.8% / նախորդ տարվա 15482 հա-ի դիմաց /+936 հա նախորդ տարվա համեմատ/:

2014թ. աշնանը կատարվել է 6991 հա /+155 հա նախորդ տարվա համեմատ/ աշնանացան: 14.01.2016թ. դրությամբ կատարվել է 6493 հա/ Կոթի, Ոսկեպար, Բարեկամավան, Բաղանիս,Պառավաքար, Չինարի,Վազաշեն և այլ համայնքներում սահմաններում տիրող լարվածության պատճառով շուրջ 1200հա աշնանացան 2015թ.չի կատարվել/:

«Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 275 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 17.5 տոննա գարնանացան գարու, 2.8 տոննա առվույտի սերմացուներ,որոնցով կատարվել է համապատասխանաբար 87.5 հա և 112 հա ցանք:

Պետական աջակցության ծրագրերով 2015թ.մարզին հատկացվել է.

| | |
|---|---|
| ազոտական պարարտանյութ | - 400 տոննա,իրացվել է 400 տոննա |
| կալիումական պարարտանյութ | – 5 տոննա, իրացվել է 4.5 տոննա |
| ֆոսֆորական պարարտանյութ | – 10 տոննա, իրացվել է 3.6 տոննա |
| դիզելային վառելիք | – 550000լիտր,իրացվել է 237600 լիտր |

Բոլոր մշակաբույսերի գծով 2015թ. նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է համախառն բերքի աճ:

| հ/հ | Ցուցանիշի անվանումը | 2014թ. /տոննա/ | 2015թ. /տոննա/ | +/- /տոննա/ | % |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն | 35538 | 37996 | +2458 | 107 |
| 2 | Կարտոֆիլ | 23659 | 25178 | +1519 | 106 |
| 3 | Բանջարեղեն | 12008 | 13510 | +1502 | 113 |
| 4 | Բոստան | 2701 | 3157 | +456 | 117 |
| 5 | Տեխնիկական մշակաբույսեր | 1424 | 1454 | +30 | 102 |
| 6 | Պտուղ, հատապտուղ | 10303 | 15358 | +5055 | 149 |
| 7 | Խաղող | 14584 | 16738 | +2154 | 115 |
| 8 | Խոտ | 65561 | 70577 | +5016 | 108 |

Մթերվել է 7884 տոննա խաղող, 1 կգ-ը 140 դրամով, այդ թվում՝
<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 5070 տոննա
<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-1215 տոննա /1 կգ-ը 120 դրամով/
<<Իջևանի գինու գործարան>> ԲԲԸ – 833 տոննա
Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ - 506 տոննա
<<Էկոգարդեն>> ՍՊԸ – 260 տոննա:
2015թ.մթերվել է նաև 527 տոննա պտուղ, հատապտուղ և բանջարեղեն, այդ թվում.
Իջևանի գինու գործարան - 312 տոննա
<<Էկոգարդեն>> ՍՊԸ /գ.Այգեձոր/ - 150 տոննա
<<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ/գ.Ջուջևան/ – 65 տոննա

ՀՀ կառավարության որոշմամբ 2015թ.աշնանացանի համար մարզին հատկացվել է 515 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու,որը տրամադրվել է 38 համայնքի 2107 շահառուի,որոնց կողմից կատարվել է 1717 հա աշնանացան:

<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման>> ծրագրի շրջանակներում 2014թ. մարզի Արծվաբերդ /20 հա/ և Բերդ /7 հա/ համայնքներում հիմնվել են սերմնաբուծական տնտեսություններ, որոնց տրամադրվել է 8.1 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու: 2015թ. բերքահավաքից հետո 16.2 տոննա 1-ին վերարտադրության սերմացուն հետ է վերադարձվել և բաշխվել այլ գյուղացիական տնտեսությունների:

Անասնապահություն

Մարզի համայնքներում 2015թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնագլխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

| Անվանումը | 2014թ. | 2015թ. | +/- |
|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր | 37003 | 37064 | +61 |
| այդ թվում՝ կովեր | 17478 | 17504 | +26 |
| Խոզեր | 16548 | 16564 | +16 |
| Ոչխարներ և այծեր | 16154 | 16910 | +756 |
| Մեղվաընտանիքներ | 21970 | 21757 | -213 |

| | | | |
|---|---|---|---|
| Թռչուններ | 202783 | 211061 | +8278 |

Ծանոթություն: 2016թ.հունվարի 1-18-ը մարզի համայնքներում անց է կացվում անասունների համատարած հաշվառում

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվել են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ նախատեսված բոլոր միջոցառումները:

## Ծրագրեր

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակներում որպես տոհմային կորիզ դեռևս 2011թ. ներկրվել է 80 գլուխ դանիական "Ջերսեյ" ցեղի 4-5 ամսական հղի երինջներ,որոնք խմբակային կարգով պահվում են Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում: 15-ական գլուխ էգ հորթեր որպես մայրացու կոոպերատիվ հիմունքներով տրամադրվել են Կիրանց, Նավուր,Գոշ,Գանձաքար,Արծվաբերդ համայնքներին,որոնց համար կառուցվել են ֆերմաներ: Ավարտվել են Կողբի ֆերմայի կառուցման աշխատանքները:

Հիմնադրամի անասնապահական համալիրում կառուցվել են կաթի վերամշակման, պանրի և խտացված կերերի արտադրամասեր:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

2015թ.վերոնշյալ ծրագրում ընդգրկվել են մարզի Վարագավան, Վ.Ծաղկավան, Տավուշ,Չինարի,Արծվաբերդ,Կողբ,Կոթի,Իծաքար,Մովսես,Ն.Կ.Աղբյուր,Նորաշեն,Բերդ համայնքները/ընդամենը 25 համայնք/: Համայնքներում ստեղծված կոոպերատիվներին գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումն ընթացքի մեջ է:

Մարզի տարածքում <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ>> շրջանակներում/Հայկական միրգ/ 2014-2015թթ. հիմնվել է 22.3 հա պտղատու այգի /դեղձ, ընկույզ, նուռ, պիստակ, նեկտարիտին/:

Արճիսում - 4.5 հա նեկտարիտինի,8 հա կեռասի
Պտղավանում - 3.8 հա ընկույզի
Դեբեդավանում - 4.1 հա սալորի,1.9 հա դեղձի:

ՀՀ կառավարության 02.07.2015թ.թիվ 766-Ն որոշմամբ մարզին հատկացված 28մլն. դրամով Նոյեմբերյանի տարածաշրջանի 6 համայնքներում տեղադրվել են 10 հատ հակակարկտային կայաններ:

Մարզի սահմանամերձ Այգեհովիտ համայնքում ադրբեջանական կողմի հրետակոծությունների պատճառով 22.6 հա խաղողի այգիների բերքը չհավաքած 46 խաղողագործներին ՀՀ կառավարության կողմից որպես փոխհատուցում տրամադրվել է 16.1 մլն.դրամ:

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ բենտոնիտային կավի, մարմարացված կրաքարերի, բազալտների, ավազաքարային կրաքարերի, ֆելզիտային տուֆերի, վիտրոկլաստիկ, մերգելային և դոլոմիտային կրաքարերի, դիաբազային պորֆիրիտի, գունավոր կոնգլոմերատների, ավազակոպճային խառնուրդների, գիպսատար կավերի, ոչ անտրացիտային ածուխի, ինչպես նաև հանքային ջրերի /Դիլիջանի, Ֆրոլովո բալկայի, Ակնաղբյուրի, Լալիգյուղի, Կողբի և այլն/ հանքավայրերով:

2014 – 2015թթ. Դիլիջան քաղաքում վերակառուցվել է կոյուղու մաքրման նախկին կայանը և սողանքից վնասված կոյուղու գլխավոր կոլեկտորը: Սա նաև տուրիզմի զարգացումը խթանելու նպատակ է հետապնդում: Աշխատանքներն իրականացվել են համաֆինանսավորման սկզբունքով՝

Դիլիջան համայնք /37մ,լն.դրամ/, կոկա-կոլա /150000ԱՄՆ դոլար/,ՄԱԿ 200000 ԱՄՆ դոլար/: Համայնքի կողմից տրամադրված գումարներով ձեռք են բերվել անհրաժեշտ մեքենա-սարքավորումներ:

<<Դիլիջան>> Ազգային Պարկում իրականացվել է էկոտուրիստական երթուղիների և ժամանցի կազմակերպման կետերի կահավորման ու բարեկարգման ծրագիր /15.2 մլն.դրամ/:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշմամբ /15.05.2015թ. թիվ Մ-527-Ա որոշում/ ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և <<Դիլիջան ազգային պարկ>> ՊՈԱԿ – իմիջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում իրականացվել են <<Դիլիջան ազգային պարկ>>ՊՈԱԿ – ի տեխնիկական վերազինման աշխատանքներ, ձեռք է բերվել 19.2 մլն. դրամի հիմնական և շրջանառու միջոցներ:

Որոշակի աշխատանքներ են տարվել թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգման ուղղությամբ: Մարզում կան պաշտոնական 5 աղբավայրեր, որոնք շահագործվում են Իջևան, Բերդ, Նոյեմբերյան, Ոսկեպար,Բագրատաշեն համայնքների կողմից: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի ռեկրեացիոն գրավչության վրա: Աշխատանքներ են իրականացվել բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, միջհամայնքային աղբավայրերի նախագծման և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրման, աղբահանության աշխատանքների բարելավման ուղղությամբ: ՈՒժեղացնել է վերահսկողությունը համայնքների վարչական տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ:

Մարզում անտառային ռեսուրսների պահպանության հարցը փոխկապակցված է հողերի, կենսաբազմազանության, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության հետ:

Հաշվի առնելով, որ մարզի 25 համայնքներում առկա են սողանքային գոտիներ, որոշակի աշխատանքներ են կատարվել բնակավայրերի և ինժեներական ենթակառուցվածքների պահպանության համար: Սողանքների, սելավների և ջրհեղեղների հետևանքով հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման նպատակով հսկողության տակ են վերցվել առավել վտանգավոր հատվածները:

Մարզի ռեկրեացիոն գրավչությունը բարձրացնելու համար աշխատանքներ են տարվել որոշ համայնքներում կոյուղու համակարգեր ստեղծելու ուղղությամբ:

Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը՝ կենցաղային և գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերն են, ուսումնասիրվել են կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր մակերեսը կազմում է 270399 հա, որից՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր 110762.8 հա
- բնակավայրերի հողեր 9968 հա
- արդյունաբերության, ընդերքօգտագործմքն և այլ արտադրական նշանակության հողեր 1154.2 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 519.9 հա
- հատուկ պահպանվող տարածքների 33021 հա
- հատուկ նշանակության 247.5 հա
- անտառային 113566.7 հա
- ջրային 1158.3 հա
- պահուստային 0.4 հա

Գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխվածությունն ըստ հողատեսքերի հետևյալն է

- վարելահողեր 25588.4 հա

| | |
|---|---|
| - բազմամյա տնկարկներ | 1902.1 հա |
| այդ թվում՝ պտղատու | 704.1 հա |
| խաղողի այգի | 1198.1 հա |
| - խոտհարքներ | 9401.3 հա |
| - արոտներ | 63065.6 հա |
| - այլ | 10805.4 հա |

2015 թվականին մարզի 7 համայնքներում իրականացված ստուգումների արդյունքում համայնքներում հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ թվով 6 համայնքներում խախտումներ չեն հայտնաբերվել:

Իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ համայնքների կողմից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել են ՀՀ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան, իսկ հետ վերցնելը 100% իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մարզի համայնքներում 2015 թվականին իրականացված հողամասերի օտարումից գոյացած միջոցների մեծ մասը բաժին է ընկնում մարզի քաղաքային համայնքներին, որոնք ունեն գլխավոր հատակագծեր և գոտիավորման սխեմաներ:

Հողամասերի աճուրդային վաճառքներից առաջացած գումարներն առաջնահերթ օգտագործվել են լիցենզավորված կազմակերպություններին հողամասերի իրադրական հատակագծերի պատվիրման և չափագրման աշխատանքների իրականացման համար:

Մարզի գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանումը մշտապես գտնվում է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման, համայնքների հսկողության տակ և մինչև այժմ շարքից դուրս եկած կետեր չեն հայտնաբերվել:

ՀՀ Կառավարության 29.12.2011 թ. N 1918 որոշման համաձայն, կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել թվով 23 հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, որոնցից 22-ին տրվել է դրական եզրակացություն, 1-ը մերժվել է:

ՀՀ Կառավարության 23.10.2000թ. N 656 որոշման համաձայն կազմվել է մարզի ամենամյա հողային ամփոփ հաշվեկշիռը և սահմանված ժամկետում /մինչև 01.08.2015 թ./ ներկայացվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համաձայնեցմանը:

Մարզի համայնքներից 93%-ում առկա են քաղաքաշինական, հողաշինարարական նախագծեր, որոնցից 4 քաղաքային և 1 գյուղական համայնքներում՝ գլխավոր հատակագծեր և գոտիավորման սխեմաներ:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2015թ-ին ՀՀ Տավուշի մարզում պետական բյուջեի, Համայնքային բյուջեների, մասնավոր ներդրումների, և այլ միջազգային ծրագրերի հաշվին կրթության, մշակույթի, անհատական բնակարանաշինության և հատուկ նշանակության օբյեկտների շինարարության բնագավառներում իրականացվել են 8 674.580 մլն դրամի կապիտալ ներդրումներ: /հավելված 5/

2012-2015թթ իրականացվում է Դիլիջանի միջազգային դպրոցի կառուցման աշխատանքները՝ մոտ 150.0 մլն դոլար ընդանուր արժեքով (2015թ կապ.շինարարության ներդրումները կազմում են մոտ 0.5 մլրդ դրամ),: Նշված աննախադեպ ու մեծածավալ ծրագրերին համահունչ ՀՀ կառավարության կողմից մշակվել է Դիլիջան քաղաքի զարգացման ծրագիրը, որի իրականացմանը ականատես ենք ու մասնակից մեր ընթացիկ աշխատանքներում:

2015թ. ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդի հաշվին «Հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների և սահմանամերձ համայնքների զարգացման» ծրագրերով Տավուշի մարզում

իրականացվել է 1290.4 մլն դրամի շինարարական աշխատանքներ՝ վերանորոգվել են 9 կրթական հաստատություն, 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն, 1 ջրամատակարարման, 2 բնակարանաշինական, 2 Ճանապարհաշինական օբյեկտներ: /հավելված 6/

2011-2015թթ ընդհանուր առմամբ Հրատապ լուծում պահանջող» ծրագրերով կառուցվել և վերանորոգվել են 10 համայնքային կենտրոն, վերանորոգվել են 65 կրթական հաստատություն, 23 բազմաբնակարան շենքերի տանիքներ, 7 մանկապարտեզ, 2 առողջապահական կենտրոն կառուցվել է 5.6 կմ ներքին ցանցերի գազատարներ, 8.0 կմ ջրատար, 8,6 կմ ներհամայնքային ճանապարհ, 1 հատ կամուրջ 57մ, 850 գծմ ջրահեռացման համակարգ:

ՀՀ Քաղաքաշինության նախարարության պատվիրակությամբ ՀՀ պետական բյուջեով մարզում կատարվել են Իջևանի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքները 109.761մլն դրամի:

Մարզում ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ծրագրերով իրականացվում են 1276572,5 հազար դրամի ջրամատակարարման աշխատանքներ և 454844.7 հազար դրամի գազաֆիկացման աշխատանքներ :

2015թ Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից ք.Դիլիջանում շարունակվում է իրականցվել ՊԵԿ ուսումնական կենտրոնի կառուցման և վերակառուցման աշխատանքները՝ 1500.0 մլն դրամ ընդանուր արժեքով, աշխատանքները ընթացքի մեջ են:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով N 1161 - Ն որոշմամբ հատկացվել է 66,030.5 հազ.դրամ Ադրբեջանի Հանրապետության կողմից իրականացված ռազմական գործողությունների արդյունքում հասցված վնասների փոխհատուցման նպատակով;

2015 թվականի 19 նոյեմբերի թիվ 1361-Ն որոշմամբ հատկացվել է 113868.4 հազ. դրամ նոյեմբեր ամսի ուժեղ քամիների հետևանքով համայնքներին հասցված վնասների վերացնելու նպատակով:

Անցած տարում խոշորացված հաշվարկներով մարզում անհատական ներդրումների հաշվին իրականացվել են մոտ 1500,0 մլն դրամի տարբեր բնույթի աշխատանքներ:

## ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզն ընդգրկում է 152.6կմ միջպետական նշանակության, 336.8 կմ հանրապետական նշանակության և 300,1 կմ մարզային /տեղական/ նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

2015թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 539.4 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 475,7 կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 446,3 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության աշխատանքներ:

2015թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 76.500 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է 103.4 կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 60.2 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության աշխատանքներ:

2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սկսվել և 2015թ. հունիս իրականացվել է Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար-Այգեպար ավտոճանապարհի վտանգավոր ճանապարհահատվածի կմ 12+200 – կմ 17+100 տեղամասը շրջանցող նոր կառուցվող 3.2կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները՝ 558.0 մլն.դրամ պայմանագրային արժեքով: <Ճաննախագիծ> Ինստիտուտ ՍՊԸ-ի կողմից իրականացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, կազմման գործընթացը: Տեխնիկական հսկողությունն իրականացրել է 'Հայաստանի հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն' ՓԲԸ-ն: Իջևանի ՃՇՇ> ՓԲԸ-ի հետ աշխատանքների

կատարման պայմանագրի դադարեցումից հետո աշխատանքները շարունակել և ավարտել է <ԽԱՉՀԱՐ> ՍՊԸ-ն: Նշված ճանապարհով ապահովվում է անվտանգ տրանսպորտային կապը՝ Բերդի տարածաշրջանի հետ:

2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է Հ-36 հանրապետական նշանակության ավտոճանապարհի Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի 700գծմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները՝ 117.0 մլն դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքներն իրականացրել է <Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ-ն:

ՀՀ Կառավարության 23-ը հուլիսի 2015թ. թիվ 796-Ն որոշմամբ Հ-73 Մ-4-Պարզ լիճ հանրապետական նշանակության ավտոճանապարհի և կամրջի վերակառուցման աշխատանքների իրականացման համար հատկացվել է 973.2 մլն դրամ: Աշխատանքներն իրականացնում է <Սահակյանշին> ՓԲԸ-ն՝ 934.315 մլն դրամ պայմանագրային արժեքով:

Պայմանագրի շրջանակներում իրականացվել են վերակառուցվող ավտոճանապարհի նախապատրաստական, հողային բնույթի, ջրահեռացման համակարգի կառուցման, ավազակոպճային և խճային ծածկերի տեղադրման, բետոնե հիմքով ճանապարհի կառուցման, մի շարք կոմունիկացիաների վերատեղադրման-կառուցման, կամրջի հենարանների կառուցման և մի շարք այլ շինարարական աշխատանքներ: Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով տեխնոլոգիապես անհնարին էր ճանապարհի ասֆալբետոնե ծածկի կառուցումը և վտանգավոր էր կամրջի կառուցման երկաթբ

ետոնյա որոշակի շինարարական աշխատանքների իրականացումը: ՀՀ Կառավարության որոշմամբ նշված աշխատանքների պայմանագրային ժամկետը երկարաձգվեց մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը:

2015թ. Իջևանի և Դիլիջանի քաղաքապետարանների պատվիրատվությամբ ճանապարհաշինության բնագավառում իրականացվել են 76.1 մլն դրամի աշխատանքներ

Ընդհանուր առմամբ՝ 2015թ.-ի ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 2 352,2 մլն դրամ:

2015թ.-ին մարզում ճանապարհաշինության բնագավառում իրականացվող աշխատանքների ուղղությամբ ներդրումների աճը 2014թ.-ի համեմատությամբ կազմում է 40 %:

## ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Տավուշի մարզի 5 քաղաքներում և 4 գյուղական բնակավայրերում /Դեղձավան, Հաղթանակ, Բերդավան, Լուսաձոր/ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության 'Ջրտնտպետկոմի' 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ-ի ''Հարավ-Արևելյան'' տարածքային մասնաճյուղի ''Դիլիջան'', ''Իջևան'',''Բերդ'', ''Նոյեմբերյան'' և ''Հյուսիս-Արևմտյան'' տարածքային մասնաճյուղի Ալավերդի'' տեղամասերի կողմից, իսկ մնացած բնակավայրերում՝ համայնքապետարանների կողմից:

Դիլիջան և Բերդ քաղաքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից մաքրման կայանների միջոցով, Իջևան, Նոյեմբերյան և Այրում քաղաքներում կապտաժներից, ինքնահոս և մեխանիկական եղանակներով՝ համապատասխանաբար 85% և 15 % հարաբերությամբ:

Սպասարկվում են 57 գյուղական և 5 քաղաքային համայնքներ: Արտաքին ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 1190 կմ, որից քաղաքային – 207 կմ, իսկ ներքին ցանցի ընդհանուր երկարությունը 510 կմ է, որից քաղաքային – 221 կմ:

Ներկայումս ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառուցվածքներում ներգրավված են 79 մեծ և փոքր ջրաղբյուրներ , 18 բաց աղբյուրներ, 8 խորքային հորեր, 4 պոմպակայան (Բերդավան, Ոսկեպար, Իջևան, Ազատամուտ), 101 ՕԿՋ, 4 ջրի մաքրման կայան (Բերդ-1, Դիլիջան-3):

Մարզի խմելու ջրի ընդհանուր տնօրինվող ռեսուրսները կազմում են 730 լ/վրկ:

Ջրաչափերի տեղադրման գործընթացին զուգահեռ /մոտ 18000 ջրաչափ Իջևան-5325, Դիլիջան-5030, Բերդ-2415, Նոյեմբերյան-4020, Այրում-1210/ նվազում է ջրի անհարկի կորուստները: Ներկա դրությամբ ջրամատակարարման տևողությունը ավելացել է միջինը 6 ժամով:

2015թ իրականցվում են հետևյալ աշխատանքները՝

**Իջևանի տարածաշրջան**

ԻՖԱԴ

Վազաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը 71.7 մլն.դրամ աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 20.2 մլն դրամ/ :

Գանձաքար գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը 464.0 մլն.դրամ աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 445.5 մլն դրամ/ :

Սևքար գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը 283.0 մլն.դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 238.1 մլն դրամ/ :

Ջրտնտպետկոմ /ԵԶԲ/

Իջևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավում արժեքը 1498.0 մլն.դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 1324.3 մլն դրամ, որից 564.3 - 2015թ./:

Ազատամուտ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 181.6 մլն.դրամ, աշխատանքներն ավարտման փուլում են /2015թ. իրականացվել է 62.7 մլն դրամ/ :

Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սեփական միջոցներ

Իջևան քաղաքի ջրահեռացման համակարգի բարելավում արժեքը 1.83 մլն.դրամ/ավարտված է/:

ՕՔՍՖԱՄ միջազգային բարեգործական կազմակերպություն, ''Հույսի կամուրջ'' ՀԿ

Ակնաղբյուր գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 5.3 մլն.դրամ/ավարտված է/:

Համայնքի բյուջե

Աչաջուր գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 0.9 մլն.դրամ/ավարտված է/:

Գետահովիտ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 3.2 մլն.դրամ/ավարտված է/:

ՊԲ

Սարիգյուղ համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 3.0 մլն.դրամ/ավարտված է/:

ՀՀՀ

Խաչարձան գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 175.0 մլն.դրամ, իրականացվել է 100 մլն դրամ:

**Դիլիջան**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ/Եվրոպական ներդրումային բանկ/Եվրոպական միություն

Դիլիջան քաղաքի արտաքին և ներքին ցանցերիի վերակառուցում, նոր ԿՄԿ-ի կառուցում, ընդհանուր արժեքը-2540.7 մլն դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են /իրականացվել է 2041.0.0 մլն դրամ, որից 964.0 – 2015թ./:

Ասիական զարգացման բանկ

Դիլիջան քաղաքի Ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-155.0 մլն դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 123.2 մլն դրամ/:

Համայնքի բյուջե

Հաղարծին գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում, արժեքը 13.0 մլն դրամ, ավարտված է

ՊԲ, Համայնքի բյուջե

Թեղուտ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 15.0 մլն դրամ, ավարտված է

**Բերդի տարածաշրջան**

Ասիական զարգացման բանկ /ՀԶԿ/

Բերդ քաղաքի արտաքին և ներքին ցանցերիի վերակառուցում, արժեքը-510.6 մլն դրամ, աշխատանքներն ավարտման փուլում են/ 2015թ. իրականացվել է 180.3 մլն դրամ/ :

ԻՖԱԴ

Վ.Կ.Աղբյուր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը 187.0 մլն.դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 56.1 մլն դրամ/ :

ՀՕՖ

Տավուշ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 4.0 մլն.դրամ/ավարտված է/:

Չորաթան գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 3.0 մլն.դրամ/ավարտված է/:

''Կարմիր Խաչի'' ընկերություն

Մովսես գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 3.3 մլն.դրամ/ավարտված է/:

Վիվասել-ՄՏՍ, Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ, համայնքի բյուջե

Արծվաբերդ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 33.0 մլն.դրամ/ավարտված է/:

ՀՕՖ, Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ, համայնքի բյուջե

Չինարի գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը 13.0 մլն.դրամ/ավարտված է/:

**Նոյենբերյանի տարածաշրջան**

Ջրտնտպետկոմ /ԱՋԲ/

Նոյեմբեյան քաղաքի արտաքին և ներքին ցանցերիի վերակառուցում, արժեքը-385.0 մլն դրամ, աշխատանքներն ընթացքի մեջ են/ իրականացվել է 351.0 մլն դրամ,որից 155.0-2015թ./ :

Բերդավան գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում, արժեքը-47.7 մլն դրամ,ավարտմված է:

Բագրատաշենի գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-185.5 մլն դրամ, իրականացվել է 104.4մլն:

Պտղավան գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-91.0 մլն դրամ, իրականացվել է 32.0մլն:

Զորական գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-30.0 մլն դրամ, իրականացվել է 11.7 մլն:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սեփական միջոցներ

Այրում քաղաքի ջրահեռացման համակարգի բարելավում արժեքը-088 մլն դրամ, ավարտված է

ԻՖԱԴ

Բարեկամավան գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը-71.7 մլն դրամ, /իրականացվել է 30.6 մլն դրամ/:

Բագրատաշեն գյուղի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցում արժեքը-115.0 մլն դրամ /իրականացվել է 54.6 մլն դրամ/:

Բաղանիս գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում արժեքը-256.3 մլն դրամ,իրականացվել է 77 մլն դրամ:

''Կարմիր Խաչի'' ընկերություն

Դովեղ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-1.5 մլն դրամ/ավարտված է/:

Կոթի գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում արժեքը-2.3 մլն դրամ/ավարտված է/:

## ՈՌՈԳՈՒՄ

Տավուշի մարզում ոռոգելի կադաստրային հողատարածքները կազմել են 20789 հա, որից Իջևան-5333հա, Նոյեմբերյան-10432հա, Բերդ-5024հա: Վերջին տարիներին ոռոգման համակարգերում իրականացված վերականգնողական աշխատանքների շնորհիվ այժմ հնարավոր է ոռոգել 8000 հա հողատարածք/ Իջևան-1390հա, Նոյեմբերյան-2900հա, Բերդ-2000հա/:

/Նշված ոռոգվող հողատարածքներում նշված չեն ՋՕԸ-երում չընդգրկված համայնքների հողատարածքները:/

Նախկին և այժմյան ոռոգելի հողատարածքների տարբերությունը արդյունք է հիմնականում հզոր ոռոգման համակարգերի սահմանամերձ լինելուն, որոնք այժմ ավերված են / Ջողազի, Սևքարի, Այգեհովիտ-Վազաշեն ջ/կ-երի համակարգեր-8000հա/:

2015թ. կոռոգվել է 4721հա հողատարածք /Իջևան-660, Նոյեմբերյան-2761, Ուտիք-1293, որից 1961 հա մեխանիկական, 2760 հա ինքնահոս եղանակով/:

Նոյեմբերյանի տարածաշրջան

Ոռոգման ջրամատակարարումն իրականացվում է 'Նոյեմբերյան' ՋՕԸ-ի կողմից, որում ընդգրկված են 17 համայնքներ, ջրօգտագործողների կադաստրային քանակը 5950 շահառու:
Ոռոգելի կադաստրային հողատարածքը – 10432 հա:
Այժմ հնարավոր է ոռոգել մոտ 4000 հա:
Նախկինում 2500 հա ոռոգվել է Ջողազի համակարգից:

2015թ. իրականացվել են 20.0 մլն դրամի գարնան նախապատրաստական աշխատանքներ:

Բերդի տարածաշրջան

Ոռոգման ջրամատակարարումն իրականացվում է 'Ուտիք' ՋՕԸ-ի կողմից, որում ընդգրկված են 13 համայնքներ, ջրօգտագործողների կադաստրային քանակը 5800 շահառու:
Ոռոգելի կադաստրային հողատարածքը – 5024 հա:
Այժմ հնարավոր է ոռոգել 2500 հա:

2015թ. իրականացվել են 7.6մլն դրամի գարնան նախապատրաստական աշխատանքներ:

Իջևանի տարածաշրջան

Ոռոգման ջրամատակարարումն իրականացվում է 'Իջևան' ՋՕԸ-ի կողմից, որում ընդգրկված են 15 համայնքներ, ջրօգտագործողների կադաստրային քանակը 5900 շահառու:

Ոռոգելի կադաստրային հողատարածքը – 5333 հա:

Այժմ հնարավոր է ոռոգել 1500 հա:

Նախկինում 4000 հա ոռոգվել է Ջողազի, Սևքարի, Այգեհովիտ-Վազաշեն ջ/կ-երի համակարգից, որն այժմ վերակառուցել անհնարին է սահմանին մոտ լինելու պատճառով:

2015թ. իրականացվել են 3.0 մլն դրամի գարնան նախապատրաստական աշխատանքներ:

**Ոռոգման համակարգերում 2015թ. իրականացվել և իրականցվում են հետևյալ աշխատանքները՝**

Ջրտնտպետկոմ

Նոյեմբերյանի բազմաստիճանի մայր ջրանցքի վերակառուցում, արժեքը 87.6 մլն դրամ /իրականացվել է 70.0 մլն դրամ/:

Զեյթուն-Հաղթանակ թիվ 1 /ինքնահոս/ջրանցքի և Զեյթուն թիվ 1 հեռացնող ջրացքի վերակառուցում, արժեքը 519.0 մլն դրամ/ իրականացվել է 450.0 մլն դրամ/:

Աչաջուր ջրհան կայանի մոտեցնող ջրանցքի վերակառուցում արժեքը 55.0 մլն դրամ /իրականացվել է 40.0 մլն դրամ/:

Լալվարի N1, Արչիս-Շնողի N1, Լճաձորի, Հազթանակի N1, Զեյթուն-Հաղթանակի N2, Պտղավանի N2, Դովեղի և Բազմաստրճան N4 պոմպակայանների սարքավորումների վերանորոգում, արժեքը 15.9 մլն դրամ ավարտված է:

Վերին Կարմիր աղբյուրի ջրամատակարարման խողովակաշարի վերանորոգում արժեքը 1.5 մլն դրամ, ավարտված է:

Քարագլուխ-Պառավաքար ինքնահոս ջրատարի վերանորոգում Դ= 250 մմ, Լ=200 արժեքը 1.7 մլն դրամ, ավարտված է:

Ակնաղբյուր-Լուսաձոր պոմպակայանի վերանորոգում արժեքը 1.0 մլն դրամ, ավարտված է:

<u>ՀՀՀ</u>

''Սրանոցի'' /Կիրանց համայնք/ ջրանցքի վերակառուցում, արժեքը 169.0 մլն դրամ, աշխատանքներն ավարտման փուլում են, 2015թ. իրականացվել է 39.0 մլն դրամ:

<u>ԻՖԱԴ</u>

Դեբեդավան համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում, արժեքը 76.3 մլն դրամ/իրակացվել է 68.7 մլն դրամ/:

Արճիս համայնքի ոռոգման բաժանարարների վերակառուցում, արժեքը 21.0 մլն դրամ/ իրակացվել է 19.4 մլն դրամ/:

Հաղթանակ համայնքի ոռոգման բաժանարարների վերակառուցում, արժեքը 119.5 մլն դրամ/ իրակացվել է 72 մլն դրամ/:

Լճկաձոր համայնքի ոռոգման բաժանարարների վերակառուցում, արժեքը 81.5 մլն դրամ/ իրակացվել է 80.1 մլն դրամ/:

Պտղավան համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում, արժեքը 94.6 մլն դրամ/ իրակացվել է 28 մլն դրամ/:

<u>ՓՄՁ ՀԱԿ</u>

Դիտավան համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում, արժեքը 11.0 մլն դրամ, ավարտված է:

Կողբ համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում, արժեքը 9.0 մլն դրամ, ավարտված է:

<u>''Շեն'' Բարեգործական ընկերություն, համայնքի բյուջե</u>

Պառավաքար համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում, արժեքը 6.0 մլն դրամ, ավարտված է:

<u>ՌԵՍԿԱՏ</u>

Չինչինի ջրարբիացման համակարգի կառուցում արժեքը 20.0 մլն դրամ, ավարտված է:

## ԿԱՊ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Մարզի գյուղական համայնքների մեծ մասում ապամոնտաժվել են նախկին անալոգային ավտոմատ հեռախոսակայանները, դրանք փոխարինվել են CDM-A տիպի թվային եթերային հեռախոսակապով: Այն ունի տեխնիկական հնարավորություն գյուղական համայնքներին ապահովելու հուսալի ինտերնետ կապով, որի շնորհիվ գյուղերում համացանցի ծառայությունից օգտվում են 4700 բաժանորդներ:

<<Արմենտելը>> միջոցներ է ձեռք առնում բջջային հեռախոսակապի ցանցը ընդլայնելու և կապի բարձր որակ ապահովելու համար: Թվայնացումից և վերազինումից հետո լարային ցանցով Hi-line-ի ինտերնետ կապից օգտվում է մոտ 9840 բաժանորդ:

Մարզի տարածքում բջջային որակյալ հեռախոսակապ է ապահովվում<<Արմենտել-Բիլայն>>, <<Վիվա-Սելլ>> և <<Օրանժ>> օպերատորների տեղադրած նորագույն սարքավորումների միջոցով:

Հայաստանի Հանրապետության փոստային կապի 'Հայփոստ-թրաստ' ԲԲԸ Տավուշի մարզի չորս փոստային մասնաճյուղերը սպասարկում են բոլոր 62 համայնքները: Գործում են 9 քաղաքային և 45 գյուղական փոստային բաժանմունքներ:

ՀՀ Տավուշի մարզում հեռուստահաղորդումներն իրականացվում են <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ Տավուշի տարածքային բաժնի կողմից՝ 33 թվային կայանների միջոցով: Հեռարձակվում են Հ-1, Հ-2, RTR-PLANETA, <<Արմենիա>>, <<Կենտրոն>>, <<Երկիր-Մեդիա>> և <<Շանթ>>, <<Շողակաթ>> և մարզային <<Տավուշ TV>> ծրագրերը: Հեռարձակվում է նաև <<Իջևան TV >> տեղական ծրագիրը:

Մարզի 7 գլխավոր կայանների վերազինմանը զուգահեռ կառուցվել են ներքոհիշյալ նոր թվային կայանները. Չինարի, Այգեձոր, Էրիձոր, Այգեստան, Արծվաբերդ, Մովսես, Նորաշեն, Տավուշ, Իծաքար, Չինչին, Դեբեդավան, Բարեկամավան, Կոթի, Գանձաքար, Ազատամուտ, Վազաշեն, Կիրանց, Հաղարծին, Թեղուտ, Ներքին Գոշ, Վերին Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, <<Լեռնային Հայաստան>>, Վասիլև, Բլդանչայ: Արդյունքում մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում:

2015թ. մարզի տարածքում հիմնականում ապահովվել է անխափան և առցանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Այդ ընթացքում ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ,, ՓԲԸ ,,Աղստև,, մասնաճյուղի միջոցով փոխարինվել է 685 հենասյուն (419 երկաթբետոնյա և 266 փայտյա), ամբողջությամբ վերանորոգվել է 205 10-6/0,4 կՎ ենթակայաններ (էլ. սարքավորումներ, տանիքներ, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ), գործող ցանցին են միացել 1 հատ 35/6 կՎ և 9 հատ 6-10/0,4 կՎ տրանսֆորմատորային ենթակայաններ, նորոգվել են մոտ 730 մ բարձր լարման և ավելի քան 7800 գծամետր ցածր լարման օդային գծեր, որոնց շուրջ 20 տոկոսը փոխարինվել է նորով:

Նոր սպառողների (բնակիչ-բաժանորդներ և այլ սպառողներ) էլ. մատակարարման համար կառուցվել են նոր 10-6-0,4-0,22 կՎ էլ. հաղորդման գծեր:

ՀՀ ֆինանսների նախարարության Դիլիջանի ուսումնական կենտրոնի անխափան էլ. սնուցման ապահովման նպատակով կառուցվել են 35/6 կՎ ենթակայան, վերակառուցվել և վերազինվել է 35/10 կՎ ,,Վանք,, ենթակայանը:

Նորոգվել են 110-35 կՎ 13 ենթակայաններ, որոնց մի մասում տեղադրվել են նոր բջիջներ և մոտ 31 կմ 110-35 կվ օդային գծեր:

2015թ. հարկադիր անջատումների քանակը նվազել է, որն արդյունք է մասնաճյուղի անձնակազմի արհեստավարժ աշխատանքի:

Մարզում գործում են 13 փոքր ՀԷԿ-եր, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է մոտ 19 ՄգՎտ:

Մարզպետարանի կողմից մարզի 6 չգազիֆիկացված համայնքների գազիֆիկացման խնդիրը ՀՀ Էներգետիկայի նախարարություն ներկայացվելուց հետո ընդգրկվել է 2016-2018թթ. ՄԺԾԾ-ում: 2013-14թթ. գազիֆիկացման աշխատանքներ են իրականացվել Նոյեմբերյանի տարածաշրջանի 9 և Իջևանի տարածաշրջանի 4 համայնքներում: Նշված բնակավայրերից գազիֆիկացման աշխատանքներն ավարտվել են Ոսկեպար, Բաղանիս, Ոսկևան, Կոթի, Բարեկամավան և Հովք համայնքներում, որոնց հանձնման-ընդունման /շահագործման/ աշխատանքներն ավարտվել են 2015թ.: Այժմ IFAD-ի ծրագրով գազիֆիկացվում են Դեբեդավան, Բագրատաշեն, Դեղձավան, Պտղավան, Ջուջևան, Խաչարձան, Գոշ, Աղավնավանք, Նավուր և Իծաքար բնակավայրերը, որոնց շինմոնտաժային աշխատանքները կավարտվեն 2016 թվականին: Բերքաբեր, Աճարկուտ և Կիրանց բնակավայրերում գազիֆիկացման աշխատանքներ դեռևս չեն իրականացվում:

Մարզի 19 բնակավայրերի գազիֆիկացման ավարտից հետո գազից կարող են օգտվել ևս 6000 բաժանորդներ:

Սերտ համագործակցություն է ապահովվում <<Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության>> հիմնադրամի հետ, մարզպետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձինք մասնակցում են կազմակերպվող հանդիպում-քննարկումներին:

<<Գազպրոմ-Արմենիա>> -ը իր ֆինանսական միջոցների հաշվին ստորգետնյա վթարային հատվածների վերանորոգման և վերականգնման աշխատանքներ են իրականացրել մարզի Այրում, Դիլիջան և Իջևան քաղաքների մի շարք փողոցներում, ինչպես նաև Պառավաքար և Վ. Ծաղկավան համայնքներում:

Մարզի համայնքներում 2015թ. ընթացքում մասնավոր ներդրումների արդյունքում գազիֆիկացվել են 259 առանձնատներ: Ոչ պետական միջոցներով գազիֆիկացվել են ընդհանուր առմամբ 35 օբյեկտներ:

Ըստ <<Գազպրոմ-Արմենիա>> ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի տարեվերջյան տվյալների մարզի գազիֆիկացված համայնքների բաժանորդների թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է359-ով, հասնելով 26673-ի, որից բազմաբնակարան շենքերում 7700, իսկ առանձնատներում 18973:

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել և գործում են մարզային ՔՊ 12 ծառայություններ, ճշգրտված և հաստատված են բոլոր ծառայությունների պլանները՝ իրենց հավելվածներով, հաստատված են կանոնադրությունները, առկա են նրանց գործունեությունն ապահովող փաստաթղթերը:

Համաձայնեցված, ճշգրտված և հաստատված են մարզի բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող բոլոր փաստաթղթերը, ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատվել է մարզային փրկարարական վարչության 2015թ. աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների պլան - ժամանակացույցը:

Տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և բնակչությունը ներգրավված են ԱԻ կանխման, դրանց հետևանքների նվազեցման միջոցառումների իրականացման գործում: Մասնավորապես համայնքների և մարզային ենթակայության հիմնարկ - ձեռնարկությունների ղեկավարներին Տավուշի մարզպետի շրջաբերականներ են ուղարկվել ԱԻ և ՔՊ հիմնախնդիրների վերաբերյալ՝ դրանցում կարևորելով համայնքային հանձնաժողովների և բնակչության ակտիվ խմբերի մասնակցությունը հնարավոր բնական աղետների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման գործին:

Մարզի տարածքում ԱԻ և ՔՊ ժամանակ բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպվել և ղեկավարվել են համաձայն Տավուշի մարզպետի կողմից հաստատված և ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հետ համաձայնեցված << Տավուշի մարզային փրկարարական վարչության 2015թ. հիմնական միջոցառումների պլանի >>, որի համար օրենսդրական հիմք են հանդիսացել << Քաղաքացիական պաշտպանության մասին >>, << Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին >>, << Հայաստանի փրկարար ծառայության մասին >>, << Սեյսմիկ պաշտպանության մասին >>, << Հրդեհային անվտանգության մասին >> ՀՀ օրենքները, ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները:

2015թ. ընթացքում ԱԻ և ՔՊ բնագավառում մշտապես առկա է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ստորաբաժանումների հետ: Համաձայն << Տավուշի մարզային փրկարարական վարչության 2015թ. հիմնական միջոցառումների պլանի >>՝ հաստատված Տավուշի մարզպետի կողմից և համաձայնեցված ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հետ, ՔՊ և ԱԻ-ում բնակչության պաշտպանության թեմաներով մարզում անց են կացվել մի շարք քննարկումներ և ուսումնավարժություններ, մասնավորապես՝

Համայնքներին սպառնացող աղետներից պաշտպանելու հարցերով հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել Տավուշի ԱՌՆ մարզային թիմի անդամների, մարզի բոլոր համայնքների ղեկավարների հետ: Անց է կացվել մարզի գետերի հնարավոր վարարումների և հեղեղումների հետ կապված հուների վտանգավոր տեղամասերի ուսումնասիրություն և անհրաժեշտ աշխատանքների ծավալների ճշտում:

ՀՀ Տավուշի մարզպետարանի և ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ համապատասխան մասնագետները մասնակցել են Հարավային Կովկասում ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի ծրագրերի «Քաղաքների կայունություն Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում» նախագծի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ քաղաքների ղեկավարների հետ հանդիպմանը:

Կազմվել և իրականացվել է ԱՌՆ մարզային թիմի 2015 թվականի աշխատանքային ծրագիրը :

Մասնակցել են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում, ԱՌՆԱՊ շարջանակներում «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» թեմայով դասընթացին:
Մասնակցել են Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ իրականացվող <<Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում>> ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում Տավուշի և Լոռու քաղաքային որոնողափրկարարական թիմերի անդամների համար դասընթացների անցկացմանը:
Ճշգրտվել է ՀՀ ՊՆ 3-րդ բանակային կորպուսի հետ ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ փոխգործողությունների պլանը:
Մասնակցել են <<Հարավային Կովկասում աղետների ռիսկերի նվազեցմանը>> ՕՔՍՖԱՄ-ի կողմից կազմակերպված հանդիպմանը:
ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ում ուսուցում են անցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների ղեկավար կազմից 20 անձինք:
ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ կողմից ՀՀ Տավուշի մարզպետարանի հետ համատեղ 2015թ.կազմվել(ճշտվել) են մարզի տարածքում տարբեր բնաձին և տեխնաձին արտակարգ իրավիճակների համար բնակչության պաշտպանության պլանները :Բացի այդ,անտառատնտեսությունների կողմիվ մշակվել,ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ հետ համաձայնեցվել և մարզպետի կողմից հաստատվել է անտառների հակահրդեհային միջոցառումների տարեկան պլանները :
ՀՀ կառավարության 02 հուլիսի 2015 թ.թիվ 766-Ն <<ՀՀ 2015թ.պետական բյուջեից գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> որոշումով ՀՀ Տավուշի մարզին հրատապ ծրագրով հատկացված 28 մլն. դրամով 2015թ

Նոյեմբերյանի տարածաշրջանի Պտղավան, Լճկածոր ,Հաղթանակ, Բերդավան, Կողբ և Արճիս համայնքներում տեղադրվել են համապատասխանաբար՝2, 1, 2, 2, 1, 2 հակակարկտային կայաններ :
ՀՀ Տավուշի մարզում առկա են մարզային և 62 համայնքային տարահանման ճշգրտված պլանները,ինչպես նաև մարզի բնակչության պատսպարման ճշգրտված պլաններն ու հաշվարկները :
ՀՀ Տավուշի մարզի բնակչության պատսպարվածու-թյունը կազմում է 99.24 տոկոս:
Հաշվի առնելով մարզում տարերային և տեխնաձին աղետների սպառնալիքները իրականացվել են դրանց կանխատեսման, կանխարգելման ու հետևանքների նվազեցմանն ուղղված մի շարք միջոցառումներ.
ՀՀ Տավուշի մարզում համայնքների դիմակայունության բարելավման ծրագրի շրջանակներում ՕՔՍՖԱՄ և ՕՔՍԵՋԵՆ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կնքվել է հուշագիր:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Տավուշի մարզում գործում է 81 դպրոց, որից 4-ը՝ ավագ: Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 77 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 15014 աշակերտ :
Առաջին դասարանցիների թիվը 2015-2016 ուս. տարում կազմում է 1737 աշակերտ:
77 դպրոցներում կոմպլեկտավորվել է 882 դասարան /նախորդ տարի՝ 860/, դասարանների միջին խտությունը կազմում է 17 /գյուղական փոքր դպրոցներում խտությունը շատ ցածր է, որի պատճառով առաջացել են երկկոմպլեկտ և եռկոմպլեկտ դասարաններ/:
Սահմանամերձ փոքր դպրոցները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում և դրական է այն, որ զգացվում է առաջին դասարանցիների աճի միտում:
Դպրոցում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 1994-ի, որոնց հիմնական մասն ունի բարձրագույն կրթություն:
Այս տարի ևս ամփոփվեցին ներառական կրթության ծրագրի իրականացման արդյունքները: Տարածքներում գործող թվով 11 <<Երեխայի զարգացման կենտրոններում>> հաշվառված են 600 երեխա:

2015թ. ընթացքում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 102 երեխա:

2015թ .ՀՀ պետբյուջեի միջոցներով վերանորոգվել են Կողբի թիվ 1 միջնակարգ, Ն.Ծաղկավանի միջնակարգ, Իջևանի թիվ 5 հիմնական, Գանձաքարի միջնակարգ, Դեղձավանի հիմնական, Արճիսի միջնակարգ դպրոցները: Կատարվել է Բարեկամավան համայնքի դպրոցի պատուհանների վերատեղադրում և պաշտպանիչ հենապատի կառուցում: Վերանորոգվել է նաև Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի մարզադահլիճը, Աչաջրի մանկապարտեզի սանհանգույցը, Պտղավանի մանկապարտեզի սանհանգույցը և խոհանոցը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 14.02.2015թ. թիվ 1028-Ա/Ք հրամանի համաձայն մարզում 2015թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 9-ը անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադաների երրորդ/մարզային/ փուլը: Մարզային փուլին մասնակցել է 205 աշակերտ, որից 69-ը իրավունք է ստացել մասնակցելու դպրոցականների առարկայան օլիմպիադաների հանրապետական փուլին: Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցներից 3-ն արժանացել են դիպլոմների, 5-ը՝ գովասանագրի:

Արծվաբերդի միջնակարգ դպրոցի թիմը ՆԶՊ –ի օլիմպիադայի հանրապետական փուլում զբաղեցրել է 2-րդ տեղը, իսկ 2015թ. անցկացված նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերում զբաղեցրել է պատվավոր 1-րդ տեղը:

Յուրաքանչյուր տարի համաձայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին ատեստավորվել է ուսուցիչների թվաքանակի 1/5-ը: Ս/թ ամռանը կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում վերապատրաստվել է 230 ուսուցիչ, որոնց ատեստավորումը անցկացվել է 2015թ. նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում:

<<Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու քննության կազմակերպման, անցկացման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կրթության և գիտության նախարարի 18.05.2010թ. թիվ 395-Ն հրամանի համաձայն 2015թ. վերապատրաստվել և հավաստագրվել են 7 ուսուցիչ՝ որից մեկը դպրոցի տնօրենի պաշտոնակատար:

Կազմակերպվել են դպրոցների տնօրենների մրցույթներ՝ հիմք ընդունելով <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին >> ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշումը:
Մարզում գործում է 48 մանկապարտեզ՝ 3181 երեխաներով, որից 5-6 տարեկան՝ 1167 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական անձնակազմի թիվ 264 է, իսկ աշխատողների ընդհանուր թիվը 655 է: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ և աշխատանքներ են տարվում մանկապարտեզների, այդ թվում նաև նախակրթարանների և մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ:

Մարզի բոլոր մանկապարտեզներն ընդգրկված են <<Քայլ առ քայլ>> հիմնադրամի ծրագրում:
Մարզում գործում են 4 պետական քոլեջ և 1 արհեստագործական դպրոց: Աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքներով, ինչպես նաև ուսումնական հաստատությունների ընդունելության տեղերի և մասնագիտությունների ցանկը մարզպետարանում քննարկելուց և անհրաժեշտ վերլուծություններից հետո նախարարություն է ներկայացվում յուրաքանչյուր տարվա անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը:

<<Գլոբալ զարգացումներ>> հիմնադրամի և <<Եվրոպական կրթական>> հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է հետազոտություն, որի նպատակն է բացահայտել

աշխատաշուկայում առկա պահանջարկը նախնական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների հմտությունների և կարողությունների նկատմամբ:

Բարձր մակարդակով կազմակերպվել են Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված միջոցառումները: Անցկացվել են <<Արիության դասեր>>, գրական ցերեկույթներ, տոնակատարություններ: 8-12 դասարաններում գրվել են շարադրություններ <<Մենք հաղթանակի սերունդն ենք>>թեմայով: 5 շարադրություն ներկայացվել է ՀՀ ԿԳՆ: Անցկացվել է հաղթանակի 70-ամյակին նվիրված՝ ռուսերենով գրված, շարադրությունների մրցույթ:

2015թ. մարզում պատշաճ մակարդակով նշվել են նաև Հայաստանի Հանրապետության պետական բոլոր տոները՝ <<Սուրբ ծնունդ>>, <<Բանակի օր>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո>> տոներ, <<Ծաղկի և երգի տոն>>, <<Հաղթանակի և խաղաղության տոն>>, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Հանրապետության տոն>>, <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>>, <<Վերջին զանգ>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Գրքի օր>>, <<Վարդանանց տոնը>>, որի ընթացքում մեծ զորավար Վարդան Մամիկոնյանի ծառի մոտ հայրենիքին անմնացորդ ծառայելու երդում են տալիս զինակոչիկները, իսկ ժողովուրդը նրանց օրհնում, բարի ծառայություն և բարի վերադարձ է մաղթում:

2015թ. մարզի հանրակրթական դպրոցներում անցկացվել է Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կրթական, մշակութային, գեղարվեստական միջոցառումների շարք:

2015թ. դեկտեմբերին անցկացվել է <<Ամենախելացին>> մրցույթը, որին մասնակցել է 90 աշակերտ, հաղթող է ճանաչվել 5 աշակերտ: <<Ամենախելացին>> հեռուստախաղի 2-րդ եթերաշրջանում հաղթող է ճանաչվել Իջևանի ավագ դպրոցի 11-դասարանի աշակերտ Արման Բայրամյանը:

2015թ. օգոստոսի 17-23-ը Ծաղկաձորում կայացած <<Բազե -2015>> համահայկական ամենամյա երիտասարդական հավաքին ակտիվորեն մասնակցել է Տավուշի մարզը ներկայացնող <<Տավուշ>> ջոկատը, որն ընդգրկված էր Կապույտ ճակատում: Մասնակիցները պարգևատրվել են գավաթով, պատվոգրերով և արծաթե մեդալով /ֆուտբոլից/:

Տուրիզմի միջազգային օրվան նվիրված տուրիստական էքսպոյին մասնակցել է նաև Տավուշի մարզը: Տավուշի երիտասարդները Տավուշի տաղավարում ցուցադրել են տարածաշրջանի առավել հայտնի ուտեստները, բերքն ու բարիքը, երգն ու պարը՝ համեմված մշակութային առանձնահատկություններով:

Արդեն 4-րդ տարին է, որ ՀՀ Տավուշի մարզն ընդգրկվել է <<Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում>> ենթածրագրում:

<<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում մարզի 11 համայնքներում / Այգեհովիտ /Կայան/, Աղավնավանք, Թեղուտ, Գոշ, Տավուշ, Իծաքար, Նոյեմբերյան/մանկապարտեզում է բացվել նախակրթարանը/, Դեղձավան, Հաղթանակ, Զորական իրականացվել է նախակրթարանների հիմնման միկրոծրագիրը: Նախակրթարաններում 2015 -2016 ուստարում ընդգրկված է 184 երեխա: 2016-2018թթ. Միջնաժամկետ ծրագրով նախատեսվում է նախակրթարաններ բացել մանկապարտեզ չունեցող ևս 11 համայնքում:

Մարզպետարանը համագործակցում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի <<Քրիստոնեական մշակութային միջազգային ծառայություններ>> բարեգործական ընկերության <<Վորլդ Վիժն>>, <<GTZ>>, <<Թրփանջյան հիմնադրամի>> և <<Հայաստան հիմնադրամի>> հետ: Խաշթառակի և Վերին Կարմիր Աղբյուրի մանկապարտեզներում իրականացվել են մասնակի վերանորոգման և կառուցման ծրագրեր: Կոթիի, Գետահովիտի և Ոսկեվանի մանկապարտեզների համար իրականացվել է մանկապարտեզների համար կահույքի ձեռք բերում ծրագիրը:

<<Վորլդ Վիժն>> Տավուշի ՏՀԾ-ի հետ 2015թ. ընթացքում մարզի 65 կարիքավոր ընտանիքների տրամադրվել է հագուստ, սնունդ և հիգիենայի պարագաներ:

ՕՔՍՖԱՄ-ի նախաձեռնությամբ <<Աղետների ռիսկի նվազեցման>> ծրագրի շրջանակներում <<Հույսի կամուրջ>> ՀԿ Իջևանի կենտրոնում աղետների ռիսկի նվազեցման և հասարակության իրազեկման նպատակով անցկացվել է ուսումնական վարժանք:

<<Հայկական ալիանս ֆրանսեզ>> կրթամշակութային կազմակերպության կողմից անցկացվել է ֆրանսերեն դասավանդողների ամենամյա սեմինար:

<<ՍՕՍ-մանկական գյուղեր>> հայկական բարեգործական հիմնադրամի կողմից տրվել է օգնություն Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցին, իսկ Իջևանի թիվ 5 մանկապարտեզում կատարել է պատուհանների և դռների վերատեղադրում:

<<ՍՕՍ-մանկական գյուղեր>> ՀԲՀ-ի եւ մարզպետարանի աջակցությամբ <<Մանկալքության կանխարգելում եւ ընտանիքների ամրապնդում>> ծրագրի շրջանակներում մարզի 4 համայնքների սոցիալապես անապահով 155 ընտանիքների տրամադրվել է հագուստ եւ սնունդ:

Ն.Կ. Աղբյուրի մանկապարտեզը վերանորոգվել է Նյու Յորքից բարերար Աթամյանների ընտանիքի կողմից: <<Կամրջակ>> կազմակերպության և <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից ավարտվել է Խաչարձանի միջնակարգ դպրոցի վերանորոգումը: Նույն հիմնադրամի կողմից կատարվել է Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի մասնակի կահավորում:

ՀՕՖ-ի կողմից սահմանամերձ համայնքների դպրոցներին տրվել է գրենական պիտույքներ և : Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներն ապահովված են ինտերնետ կապով և անհրաժեշտ սարքավորումներով: Ինտերնետ կապի և սարքավորումների խափանման դեպքերում՝ դպրոցների տնօրենների դիմումների հիման վրա, ԿՏԱԿ-ի համապատասխան մասնագետների կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն՝ կապի վերականգնման և սարքավորումների փոխման հարցում:

Միջդպրոցական ինտերակտիվ ցանցի՝ dasaran.am-ի միջոցով դպրոցները վարում են էլեկտրոնային մատյաններ և արդյունավետությունը չափող էլեկտրոնային համակարգի միջոցով ամեն ամիս չափվել է ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների արդյունավետության մակարդակը:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աջակցությամբ մարզում կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության պետական բոլոր տոները՝ <<Բանակի օր>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո>> տոներ, <<Հաղթանակի և խաղաղության>> տոն, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Հանրապետության տոն>>, <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Անկախության 24-ամյակ>>-ին նվիրված տոներ, նշվել է Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը, երկրաշարժի տարելիցը և այլն:

Մարզի բոլոր կրթական հաստատություններում անց են կացվել <<Ոսկե աշուն>> խորագրով միջոցառումներ: Նշվել են եկեղեցական <<Սուրբ ծնունդ>>, <<Սուրբ Սարգիս>> /Երիտասարդների օրհնության օր/, <<Տյարնընդ առաջ>>, <<Սուրբ Զատիկ>>, <<Խաղողօրհնեք>> տոները: Կազմակերպվել և անց են կացվել <<Ծաղկի և երգի>>, <<Վերջին զանգ>>, <<Երիտասարդական ուսանողական փառատոն>>, <<Պահպանենք մեր ավանդույթները>>, <<Մարզային մշակութային փառատոն>> խորագրերը կրող և այլ զանգվածային միջոցառումներ:

2015թ. օգոստոսի 29-ին Դիլիջանում կազմակերպվել է <<Մշակութային վերածնունդ>> գորգերի և դեկորատիվ կիրառական արվեստների ավանդական 3—րդ փառատոնը, որին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և Արցախի պատվիրակությունները:

Յուրաքանչյուր համայնք նշել է արդեն ավանդույթ դարձած իր բնակավայրի հիմնադրման օրը: Միջոցառումներն ուղեկցվել են ծառատունկերով:

Կազմակերպվել են մասսայական միջոցառումներ ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների ուղեկցությամբ: Ցուցադրություններ են կազմակերպվել թանգարաններում, արվեստի և գեղարվեստի դպրոցների ցուցասրահներում:

Դիլիջանի մշակույթի պալատում ստեղծվել է հայկական ժողովրդական երգի <<Արթուր Քեթցյան>> մանկական ուսուցողական ստուդիան:

Իջևանի մշակույթի տանը կազմակերպվել «Կյանքը՝ հանուն կյանքի» և «Մասունքներ» գրքերի շնորհանդեսները:

Իջևանի Փյունիկ պարային համույթը մանսակցել է Եռաբլուրում կազմակերպված Վազգեն Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառմանը:

Մարզային գրադարանը համալրվել է 1246 միավոր գրականությամբ, 9 անուն պարբերական մամուլով, գյուղական գրադարանները՝ 1241 միավոր գրականությամբ:

2015թ. 3 տարի ժամկետով ՀՀ Պատմական միջավայրերի պահպանության ծառայության պատմամշակութային արգելոց թանգարանից Դիլիջանի թանգարան-պատկերասրահ է տեղափոխվել դիլիջանցի գեղանկարիչների 40 ստեղծագործություններ /<<Հին Դիլիջան>> խորագրով/:

Գրադարաններում անց են կացվել Ազգային գրադարանային շաբաթի, Գրադարանավարի օրվա, Գրադարանային երեկոյի, Թարգմանչաց տոնի, Մայրենի լեզվի միջազգային օրվա, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված դասախոսություններ, գրական- գեղարվեստական ցերեկույթներ, հոբելյանական տարեթվերի կապակցությամբ ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ:

Իջևանի մարզային գրադարանի կողմից հրատարակվել է ՀՀ Տավուշի մարզում բնակվող ցեղասպանություն ապրածների ժառանգների հուշերը <<Ցեղասպանություն-100>> խորագրով, լուծվել է գրադարանի լոկալ ջեռուցման խնդիրը:

Մշակութային ժառանգության պահպանմանը նպաստելու նպատակով՝ Դիլիջանի մշակույթի պալատում 520 քառ. մետր տարածք է հատկացրել Գրադարանների կենտրոնացված համակարգին գրապահոցներ կահավորելու համար:

Ֆոնդադարաններ են ստեղծվել Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում, ընթացքի մեջ է թանգարանի հնագիտության, ազգագրության, Դիլիջանի պատմության բաժինների էքսպոզիցիոն աշխատանքները, որը կավարտվի 2016թ. առաջին եռամսյակում:

Մարզի գրադարաններն ակտիվորեն արձագանքել են բոլոր հիշարժան տարեթվերին և իրադարձություններին:

Թանգարաններից յուրաքանչյուրն առանձին ծրագրով անց է կացրել նաև <<Թանգարանային գիշեր>> միջոցառումների շարք, ինչն էլ ուղեկցվել է ցուցահանդեսներով:

Կազմակերպվել են վարպետաց դասեր՝ գորգագործություն, կարպետ, ասեղնագործություն, կրթական ծրագրեր են իրականացվել դպրոցականների հետ:

Մարզի որոշ գրադարաններում և թանգարաններում կան համակարգիչներ , տպիչ սարքեր, ունեն ինտերնետ կապ:

Դիլիջանի երկրագիտական թանգարանում տեղադրվել են տեսախցիկներ:

Իջևանի Վերնատուն պատկերասրահը ամբողջությամբ համալրվել է ժամանակակից տեխնիկայով:

2015թ. կյանքի կոչվեց Նոյեմբերյանի ժող. թատրոնը: Մարզպետի աջակցությամբ թատերախումբը շրջագայել է Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ համայնքներում:

ՀՀ Կոմպոզիտորների միության հետ համատեղ Դիլիջանում կազմակերպվել են Հայաստանում անցկացվող <<Երգի փառատոն-2015>>-ի 2-րդ և 3-րդ փուլերը: <<Հայ-էկվադորական բարեկամության>> ՀԿ-ի հետ համտեղ բացօթյա ամֆիթատրոնում կազմակերպվել է Էկվադորի ֆոլկլորային անսամբլի ելույթը:

Գեղագիտական դաստիարակության մատչելիության համար այն համայնքները, որտեղ գործում են համապատասխան կրթական կառույցներ, կիրառվում է տարբեր զեղչերի համակարգ:

Վերակառուցվել է Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցի դահլիճ-ցուցասրահը /14415.0հազ.դրամ/, մշակութային կազմակերպությունների համար ձեռք են բերվել 11400.0 հազ.դրամի գույք և սարքավորումներ:

Մարզի շատ համայնքների մշակույթի տներում գործում են տարբեր բնույթի խմբակներ որոնք մատչելի են բոլորին /կան կենտրոններ, որոնք ուսուցումը կազմակերպում են անվճար և առանց տարիքային սահմանափակման/:

Մարզի շատ շնորհալիներ մասնակցություն են ունեցել միջազգային բազմաթիվ մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, շարադրությունների մրցույթների, նկարների և լուսանկարների մրցույթների՝ արժանանալով մրցանակների ու խրախուսանքների:

Բրուտագործական սարքավորումներ են ձեռք բերվել Դիլիջանի գեղարվեստի դպրոցի համար:

Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցում բացվել է քյամանչայի դասարան, ձեռք է բերվել նոր գործիք, դպրոցում ձևավորվել է երկու երգչախումբ:

Կողբի մշակույթի կենտրոնի համար ձեռք են բերվել ձայնահզորացուցիչ սարքավորումներ և խոսափողեր:

Կողբի արվեստի դպրոցում կահավորվել է խեցեգործության դասարան՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով և գույքով:

Փոխվել են Այգեհովիտի մշակույթի տան բոլոր դռները և պատուհանները, սկսել է գործել ժող. գործիքների խմբակ:

Դրամական միջցներ է տրամադրվել ՀՀ կառավարության ծրագրում ներառված «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրի Երևանում իրականացվող միջոցառումների պատշաճ կազմակերպման նպատակով մարզից տեղափոխվող երեխաներին տրանսպորտային միջոցներով ապահովելու համար:

Մարզում կազմակերպվել են կրկեսային ներկայացումներ, ինչպես մշակույթի պալատներում, այնպես էլ դպրոցներում, Դիլիջանի ամֆիթատրոնում /Երևանի Պետական կրկես/:

Մարզում գործող թատերախմբերի /Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի, Կողբի/ կողմից բեմադրվել և հանդիսատեսի դատին են ներկայացվել բազմաթիվ պիեսներ, դրամատիկական նովելներ, հեքիաթներ:

Մարզի տիկնիկային թատերախմբերը ելույթներով հանդես են եկել ինչպես մարզի համայնքներում, այնպես էլ այլ մարզերի համայնքներում, Երևանում:

Օգոստոսին <<Մինասի գույներով>> խորագիրը կրող <<Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ պլեներ>>-ին մարզից մասնակցել են երեք երիտասարդ նկարիչներ:

Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Ոսկեվան, Բաղանիս, Վերին Կարմիրաղբյուր, Թեղուտ համայնքներում բացվեց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքար-կոթողներ:

Զորական համայնքում մայիսին կայացավ մեծ զորավարներ՝ Հովհաննես Բաղրամյանի և Համազասպ Բաբաջանյանի կիսանդրիների բացումը:

Օժանդակություն էցուցաբերվել մշակութային օբյեկտների կառուցման աշխատանքներին:

Դիլիջանի մշակույթի պալատի շենքի հիմնանորոգման խնդիրը բազմիցս ներկայացվել է Լիազորված պետական մարմիններին, տարբեր կազմակերպությունների կողմից մի քանի անգամ կատարվել են շենքի չափագրման, հետազոտման աշխատանքներ, սակայն հարցին լուծում չի տրվել:

Մարզային լրատվությամբ և հեռուստատեսությունների միջոցով պարբերաբար թե տեղեկատվություն է տրվում և , թե կազմակերպվում են ցուցադրություններ համայնքի տարածքում բնակվող ստեղծագործողների, կազմակերպված մշակութային միջոցառումների վերաբերյալ: Տեղեկատվությունը տեղադրվում է նաև մարզպետարանի և համայնքների կայք-էջերում:

## ՍՊՈՐՏ

<<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՀՀ Տավուշի մարզպետարանը օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ, համակարգում և աջակցում է մարզական միջոցառումներին: Կազմակերպվել են <<Մարզական փառատոն>> , որին մասնակցել են մարզի հինգ քաղաքների պատանի մարզիկները: Կազմակերպվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերը, որին մասնակցել են տարածքներում հաղթած երկուական թիմեր, հաղթող ճանաչված Արծվաբերդի միջն. դպրոցի թիմը մասնակցեց հանրապետական եզրափակիչ փուլին՝ գրավելով մրցանակային 4-րդ տեղը: Կազմակերպվել է ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական մարզական խաղեր, Ազգային Ժողովի գավաթի խաղարկություն, դպրոցականների շախմատի օլիմպիադա:

Մարզում իրականացվել են ֆուտբոլի, շախմատի, ըմբշամարտի միջհամայնքային և մարզային մրցաշարեր:

Մարզի հանրակրթական բոլոր դպրոցներում ստեղծվել է <<Պատանի երկրապահ ակումբ>>՝ 1396 անդամով: 560 աշակերտ մասնակցել է սերժանտական դասընթացների:

Մարտական սամբոյի աշխարհի գավաթի առաջնությունում 3-րդ տեղը գրավել է միջազգային կարգի սպորտի վարպետ, իջևանցի մարզիկ Վահե Օթարյանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները ընդգրկված են դպրոցականների շրջանում իրականացվող սպորտային միջոցառումներում:

Կազմակերպվել են <<Սպորտ հանուն հավասար հնարավորությունների>> մրցաշարեր Իջևան, Բերդ, Նոյեմբերյան, Դիլիջան քաղաքներում, որին մասնակցել է շուրջ 15 կազմակերպություններ:

2015թ կազմակերպվել են թենիսի մրցաշարեր, որին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 12 երեխա, ովքեր պարգևատրվել են խրախուսական նվերներով և մրցանակներով: Նոյեմբերյանի հաշմանդամություն ունեցող մարզիկների խումբը բասկետբոլի հանրապետական փուլում՝ Ծաղկաձոր քաղաքում, գրավել է պատվավոր 3-րդ տեղը:

<< Տավուշի մարզում անցկացվող ամենամյա սպորտային միջոցառումների ցանկում /թենիսի, շախմատի մրցաշար/ ներառվել են մարզական միջոցառումներ, որոնց անցկացման միջոցով ուշադրության կենտրոնում են գտնվում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ հանգստի կազմակերպումը և ստեղծվում են հնարավորություններ մշտապես ֆիզիկական վարժություններով զբաղվելու համար:

Ս/թ մայիսին հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում անց է կացվել <<Սպորտլանդիա- 2015>> մրցումները:

<< նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջների համաձայն կազմակերպվել է <<Լավագույն մարզական ընտանիք>>, <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> մրցույթ-ստուգատեսները: <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> մրցույթ-ստուգատեսում հաղթող է ճանաչվել Աչաջուր համայնքը:

<<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ճանաչվել է Դիլիջան քաղաքը:

Մարզպետի անմիջական աջակցությամբ կազմակերպվել է մարզի ֆուտբոլի առաջնություն, դպրոցականների շախմատի առաջնություն, մեծահասակների շախմատի քաղաքային առաջնություն: << պետական բյուջեի հաշվին հիմնովին վերանորոգվել է Իջևանի թիվ 1 դպրոցի մարզադահլիճը: Վերանորոգվել են գյուղական համայնքներում գործող սպորտ-դահլիճները, համայնքապետերին տրվել է հանձնարարական՝ ապահովել բնակչության ֆիզիկական ակտիվությանը, առողջությանը նպաստող միջոցառումների կատարումը:

Գանձաքարի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել ռազմահայրենասիրական միջոցառում, որին մասնակցել են զոհված ազատամարտիկների և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների անունով անվանակոչված դպրոցները: Հաղթող է ճանաչվել Դիլիջանի ավագ դպրոցը:

2015թ. նոյեմբերին Երևանում անցկացված բադմինթոնի դպրոցականների առաջնությանը մասնակցեց Իջևանի թիմը, որը գրավեց 2-րդ տեղը /մարզիչ՝ միջազգային կարգի սպորտի վարպետ Վարդիթեր Պողոսյան/: 6-րդ Համահայկական խաղերին մասնակցած միջազգային կարգի սպորտի վարպետ Վարդիթեր Պողոսյանը հաղթող է ճանաչվել փետրագնդակ մարզաձևում:

Իջևան, Դիլիջան և Նոյեմբերյան քաղաքներում կառուցվել են բացօթյա խաղահրապարակներ, կանաչապատվել է Աչաջուր և Ոսկեվան համայնքների ֆուտբոլի դաշտերը:

<<Սևան>> մարզական ընկերության հետ համատեղ կազմվել է միջոցառումների տարեկան ծրագիր, որտեղ նախատեսվել են ֆուտբոլի, ըմբշամարտի, վոլեյբոլի մրցաշարեր: Ակտիվ համագործակցել ենք մարզում գործող երիտասարդական-հասարակական կազմակերպությունների հետ: <<Աշխատանքային ռեզերվներ>> ընկերության հետ համատեղ անցկացվել է սպորտային մրցաշարեր:

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված բասկետբոլի մրցաշարում հաջողությամբ հանդես է եկել Իջևանի թիվ 4 միջնակարգ դպրոցի տղաների թիմը՝ նվաճելով մրցանակային երկրորդ տեղը:

Մարզում կազմակերպված սպորտային միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև մարզական հաջողությունների հասած սպորտսմենների մասին լուսաբանվել է տեղական լրատվամիջոցներով, ինչպես նաև տեղադրվել է Տավուշի մարզպետարանի կայքում:

Մարզի չորս մարզադպրոցներում միջին և բարձր դասարանների աշակերտների 70 տոկոսից ավելին ընդգրկված են տարբեր մարզաձևերում: Հիմնականում ընդգրկված են ֆուտբոլի, ըմբշամարտի, վոլեյբոլի, փետրագնդակի, ծանրամարտի, ձեռքի գնդակի խմբերում: Չորս մարզադպրոցներում գործում են 74 խումբ:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից 2015թ. մայիսին մարզի սպորտ դպրոցների սաներին տրվել է մարզահագուստ:

2015 թվականին Ֆիզիկական կոլտուրայի հայկական պետական ինստիտուտի նպատակային ընդունելությանը մարզից մասնակցել են երկու դիմորդ /ընդունվել են/: Ֆիզկուլտուրայի բոլոր ուսուցիչները, ինչպես նաև մարզիչները անցել են վերապատրաստման դասընթացներ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2015 թ-ին մարզի առողջապահական համակարգում մարզպետարանի ենթակայայության գործել են 4 փակ բաժնետիրական ընկերություններ, 20 պետական ոչ առևտրային և 3 համայնքային ոչ առևտրային ,ինչպես նաև 3 մասնավոր կազմակերպություններ՝ <<Արևհատ և Անի ԸԲԱՊ>> ՍՊԸ, <<Իռ-Վինգ>> ՍՊԸ և <<Տավուշ բժշկական կենտրոն>>-ը :

Մարզի համաճարակաբանական վիճակը եղել է կայուն, բարդացված դեպքեր չեն գրանցվել:

Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի բժշկական կենտրոնները վերանորոգված և վերազինված են ժամանակակից սարքավորումներով և գործիքներով: Մարզի տարածքում գործում են 4 շտապ օգնության կայաններ:

2015թ-ի հուլիսի 8-ին Իջևանի ԲԿ-ում բացվեց ակնաբուժական կենտրոն: Կենտրոնը նպատակ ունի տրամադրել բազմաբնույթ ականաբուժական ծառայություններ մարզի սոցիալապես խոցելի խմբերին պատկանող բնակիչներին, իսկ որ ամենակարևորն է, ապահովելու է ակնավիրաբուժական ծառայություն:

2014թ-ին մասնավորեցվել է <Դիլիջանի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ն,վերանվանվելով <ԻՌ-ՎԻՆԳ> ՍՊԸ-ի:

Այսուհետ <ԻՌ-ՎԻՆԳ> ՍՊԸ-ն իրականացնում է տարածաշրջանի հիվանդանոցային, արտահիվանդանոցային/պոլիկլինիկա/ և շտապ օգնության ծառայությունը:

Նոյեմբերյանի ԲԿ-ի կազմում գործում է Հեմոդիալիզի բաժանմունքը՝ 12 մահճակալով և պոլիկլինիկական ծառայությունը,որը ունի 3 ընտանեկան բժիշկ, նեղ մասնագիտական և ախտորոշիչ բաժանմունքներ:

Նոյեմբերյանի տարածաշրջանում են գործում՝ Այրումի, Բագրատաշենի, Զորականի, Կողբի,Կոթիի , Բերդավանի և Ոսկևանի գյուղական բժշկական ամբուլատորիաները:

2015թ-ին կառուցվեցին Ոսկևանի և Բագրատաշենի ամբուլատորիաները և հիմնանորոգվեց Բերդավանի ԳԲԱ-ն:

### Հիմնախնդիրներ

<<Իջևանի Առողջության ԱՊԿ>> ՓԲԸ-ի մասնաշենքը կոսմետիկ վերանորոգման կարիք ունի,կա նաև ռենտգեն սարքի անհրաժեշտություն:

Հաղթանակ գյուղում անմխիթար վիճակում է բուժակ մանկաբարձական կետը,անհրաժեշտ է կառուցել նոր մասնաշենք:

Մարզի շտապ օգնության կայանների ավտոպարկը ունի թարմացման կարիք : Անհրաժեշտ է Իջևանի ԲԿ-ին և Բերդի ԲԿ-ին 2 –ական հատ Ուազ մակնիշի շտապ օգնության մեքենաներ:

Մարզի բուժհաստատությունների կադրային հագեցվածությունն ապահովելու համար անհրաժեշտ են՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ,վիրաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան վիրահատող, հոգեբույժ, նյարդաբան, համաճարակաբան, մանկաբարձ-գինեկոլոգ վիրահատող, վնասվածքաբան վիրահատող, ակնաբույժ վիրահատող, էնդոկրինոլոգ, ֆթիզիատոր, ընտանեկան բժիշկ, մանկաբույժ:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում պարբերաբար հավաքագրվել և ամփոփվել են մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկությունները: Առկա են ընտանեկան, սոցիալական նպաստներ, երեխայի խնամքի, երեխայի ծննդյան միանվագ նպաստներ ստացող ընտանիքների, ինչպես նաև մարզում բնակվող խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկությունները՝ ամսեկան պարբերականությամբ: Դեկտեմբեր ամսվա վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 4-ի N 1523-Ն որոշման 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում քաղաքացիների (ընտանիքների) կողմից սխալ տեղեկատվություն ներկայացնելու պատճառով ավելի ստացված գումարների ետգանձման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելվածում /աղյուսակ 2/:

2015թ. ընթացքում մարզի 4 ՍԱՏԳ-ներին կից աջակցության խորհուրդներն ուսումնասիրել և քննարկել են սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած թվով 3580 ընտանիքների ներկայացրած դիմումներ, որոնցից դրական են լուծվել 3462 -ը:

Հավաքագրվել և մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում ստեղծվել է տեղեկատվական բազա՝ մարզի բոլոր 62 համայնքներում 2004-2015 թվականների ընթացքում կառուցված կամ կառուցվելիք շենք-շինությունների՝ հաշմանդամներին հարմարեցվածության /նաև թեքահարթակների/ վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովն անց է կացրել 5 նիստ: Քննարկվել են բազմաբնույթ հարցեր, նիստերին հրավիրվել և մասնակցել են հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ ՀԿ-ների,պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանների աշխատակիցներ:Նիստերի արձանագրությունները սահմանված կարգով գրություններով ներկայացվել են ՀՀ աշխ. և սոց. հարցերի նախարարություն, որոնց մեջ նշված են նիստերի մասնակիցները, հրավիրված անձինք և օրակարգային հարցերը: Նիստերի ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր: Հանձնաժողովի նիստերին մասնակցել են համայնքների ճարտարապետներ, որոնց հետ քննարկվել է ՀՀ կառավարության 2006թ. Թիվ 392-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը: Հղում է արվել բոլոր համայնքապետերին՝ տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքները հաշմանդամներին հարմարեցնելու և որոշման պահանջների կատարման ընթացքն ապահովելու վերաբերյալ:

Մասնակցել են մարզում գործող հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ ՀԿ-ներ, համայնքապետարանների ներկայացուցիչներ, համայնքային կենտրոնների ֆասիլիտատորներ և այլն: Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվել է ,,Տավուշ'' մարզային թերթում, և ,,Տավուշի մարզպետարան'' ինտերնետային կայքում:

Մարզպետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվել է ,,Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրում'' ծրագրի դրույթները: Մարզի սահմանամերձ գյուղական համանքի ղեկավարներին, զբաղվածության տարածքային կենտրոններին տրվել են հանձնարարականներ ՀՀ կառավարության 22.07.2014թ. թիվ 534-Ն

որոշման կատարումն ապահովելու համար: Արդյունքում մարզի 32 սահմանամերձ բնակավայրերի թվով 368 շահառու ընտանիքների համար ապահովվել է ժամանակավոր աշխատանք:
Մարզի զբաղվածության կենտրոններում հաշվառված, սահմանամերձ համայնքներում բնակվող գործազուրկների և աշխատանք փնտրող անձանց ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով մարզպետի կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ ԱՍՀ և ՀՀ ՏԿԱԻ նախարարություններ: ՀՀ կառավարության նիստում քննարկումների արդյունքում որոշում է կայացվել մարզում իրականացնել փորձնական ծրագիր: ՀՀ կառավարության 2015թ. թիվ հոկտեմբերի15-ի նիստում հաստատվել է ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման փորձնական ծրագրի իրականացման կարգը հաստատելու , Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին'' թիվ 1202-Ն որոշումը: Ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման փորձնական ծրագրի իրականացումն ապահովող միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ՀՀ ԱՍՀ նախարարության, ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալության, ՀՀ ՏԿԱԻ նախարարության և մարզպետարանի աշխատակիցներ: Հանձնաժողովը իր նիստերում քննարկել է մարզի սահմանամերձ համայնքներից ներկայացված ծրագրերը, նիստերի ընթացքում տրվել են մեթոդական ցուցումներ, անհրաժեշտ պարզաբանումներ: Աշխատանքների արդյունքում հանձնաժողովի կողմից հաստատվել են մարզի 44 սահմանամերձ համայնքների ծրագրեր /այդ թվում՝ Իջևանի տարածաշրջանում 14 ծրագիր, Բերդի տարածաշրջանում 16 ծրագիր և Նոյեմբերյանում՝ 14 ծրագիր/, և մասնակցել են 397 շահառուներ /Իջևանում – 179, Բերդում – 98, Նոյեմբերյանում – 120/: Զբաղվածության բնագավառի տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Հունիս-հուլիս-օգոստոս ամիսներին կազմակերպվել է մարզի 140 անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը Հանքավանի ,,Լուսաբաց'' ճամբարում:

## ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում որոշակի աշխատանքներ են տարվել մարզում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

2015թ. ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների 27 երեխաներ տեղավորվել են բնակչության սոցիալական պաշտպանության Դիլիջանի խնամքի գիշերօթիկ հաստատությունում: Ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրություն արդյունքում հաստատությունում գտնվող 15 երեխաներ վերադարձել են կենսաբանական ընտանիքներ:

Շարունակվել են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների տեղեկատվական համակարգի մուտքագրման աշխատանքները: Ներկայումս համակարգ է մուտքագրվել 943 կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների մասին տվյալներ, որից 267-ը՝ 2015թ. ընթացքում:

2015թ. ընթացքում մարզում վկայագրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 151 երեխաներ, որոնք կրթություն են ստանում մարզի հանրակրթական դպրոցներում:

Մարզպետարանը պարբերաբար համագործակցել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ տարածքային համապատասխան բաժինների հետ: Եռամսյակը մեկ մարզպետարան են ներկայացվել ոստիկանության կողմից հաշվառման վերցված անչափահասների վերաբերյալ տվյալներ: Համատեղ աշխատանքների արդյունքում զգալիորեն նվազել են իրավախախտման հակում ունեցող, դժվար դաստիարակվող, նախկինում դատապարտված անչափահասների թիվը: Այժմ պրոֆիլակտիկ հաշվառման մեջ են գտնվում 10 անչափահասներ:

Անօթեւան և առանց ծնողական խնամքի մնացած 8 երեխաներ տեղավորվել են համապատասխան մանկատներում, որից 7-ը՝ Իջեւանի <<ՍՕՍ-մանկական գյուղում>>, 1-ը՝ Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը: Ծնողների դիմումի հիման վրա 9 երեխաներ դուրս են գրվել մանկտներից:

Հանրակրթությունից դուրս մնացած և բացասական վարքագիծ դրսևորած 1 երեխա տեղավորվել է ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում:

Երեխա որդեգրելու համար դիմած 5 ընտանիքից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո կատարվել է այդ անձանց կենսապայմանների ուսումնասիրություն եւ տրվել համապատասխան եզրակացություն՝ երեխա որդեգրելու համար: Հաշվառվել է որդեգրման ենթակա 1 երեխա:

2015թ. ընթացքում հաշվառվել է խնամատար ընտանիք դաստիարակության համար երեխա վերցնել ցանկացող 1 անձ, որին տրվել է եզրակացություն խնամատար ծնող դառնալու հնարավորության վերաբերյալ:

Համայնքների խնամակալության ու հոգաբարձության մարմինների կողմից 4 անչափահասների նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն:

Հանրակրթությունից դուրս մնացած 3 երեխաների հետ տարվել են համապատասխան աշխատանքներ, որի արդյունքում այդ երեխաները վերադարձել են հանրակրթություն:

Շարունակվել են մարզում ծնունդը չգրանցված երեխաների հայտնաբերման աշխատանքները:

2015թ. մայիսի 15-ին մարզում նշվել է ,,Ընտանիքի օրը,,:

Հունիսի 1-ին կազմակերպվել եւ անց են կացվել երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ:

Դեկտեմբերի 3-ին մարզում իրականացվել են ,,Հաշմանդամների իրավունքների պաշտպանության,, միջազգային օրվան նվիրված մի շարք միջոցառումներ:

Հաստատվել եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել Տավուշի մարզի 2015թ. ,,Կանանց և տղամարդկանց իրավահավասարության,, եւ ,,Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման,, միջոցառումների ծրագրերը:

,,ՍՕՍ-մանկական գյուղեր,, ՀԲՀ-ի եւ մարզպետարանի աջակցությամբ ,,Մանկալքության կանխարգելում եւ ընտանիքների ամրապնդում,, ծրագրի շրջանակներում մարզի 4 համայնքների սոցիալապես անապահով 150 ընտանիքների 392 երեխաների տրամադրվել է հագուստ, սնունդ, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական, վերականգնողական տարբեր տիպի աջակցություն:

Մարզպետարանը պարբերաբար համագործակցում է ,,Վորլդ Վիժն,, Տավուշի ՏԶԾ-ի հետ : 2014թ. ընթացքում մարզի 95 կարիքավոր ընտանիքների տրամադրվել է հագուստ, սնունդ եւ հիգիենայի պարագաներ:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2015 թվականի ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը շարունակել է լուսաբանել ՀՀ Տավուշի մարզպետի և մարզպետարանի աշխատանքները՝ նպատակ ունենալով ապահովել գործունեության հանրային իրազեկումն ու թափանցիկությունը: Տավուշի մարզպետարանի կայքում ըստ համապատասխան բաժինների և էջերի տեղադրվել են պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, մարզպետարանի գործունեությանն առնչվող նորությունները:

2015 թվականի ընթացքում մարզպետարանում անց է կացվել 4 մարզխորհրդի նիստ, որոնց օրակարգի մասին նախապես տեղադրվել է տեղեկատվություն կայքում, իսկ կայանալուց հետո հրապարակվել են նաև դրանք լուսաբանող նյութերը:

Տավուշի մարզպետն ունեցել է 2 մամուլի ասուլիս: Առաջինը կայացել է դեկտեմբերի 15-ին Տավուշի մարզպետարանում, երկրորդը, որ եղել է տարեկան ամփոփիչ ասուլիսը՝ դեկտեմբերի 30-ին: Երկու ասուլիսների մասին նույնպես նախապես տեղեկատվություն է տրվել մարզպետարանի պաշտոնական կայքում: Ասուլիսին մասնակցել են մարզային լրատվամիջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև

հանրապետական լրատվամիջոցների մարզային թղթակիցները, այդ թվում <<Առավոտ>>, <<Ժողովուրդ>> թերթերի, Հ1, <<Արմենիա>>, <<Շանթ>> հեռուստաընկերությունների լուրերի բաժինների թղթակիցները:

Տարվա ընթացքում Տավուշի մարզպետարանի կայքում պարտադիր հրապարակվել են Տավուշի մարզպետի ընդունած որոշումներն ու կարգադրությունները, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները: Կայքում տեղադրվել են նաև մարզպետարանի գործունեության տարեկան և եռամյա ծրագրերը: Համապատասխան բաժիններում տեղ են գտել և հրապարակվել են նաև համայնքների ղեկավարների հաշվետվությունները, համայնքների ավագանիների ընդունած որոշումները:

Կայքի նորությունների բաժինը գրեթե ամեն օր թարմացվել է, որտեղ տեղ են գտել մարզպետարանի գործունեությունը լուսաբանող մամուլի հաղորդագրությունները: Այդպիսով, 2015 թվականի ընթացքում կայքում տեղադրվել է 313 մամուլի հաղորդագրություն: 2015-ի ընթացքում մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը կայքի մամուլի հաղորդագրությունները տարածել է նաև տարբեր սոցիալական ցանցերի միջոցով, ինչն ապահովում է առավել մեծ տեղեկացվածություն:

Հանրային իրազեկում ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների հետ:

Համագործակցությունը եղել է և թղթակիցների միջոցով, և անմիջական աշխատանք է տարվել նաև համապատասխան խմբագրության հետ: Կազմակերպվել են մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների հարցազրույցները տարբեր լրատվամիջոցներով, տրվել են սպառիչ պատասխաններ ԶԼՄ-ների կողմից բարձրացրած հարցերին, ապահովվել են համապատասխան տեղեկատվությամբ: Բանավոր հարցումները եղել են բազմաթիվ, իսկ գրավոր հարցում ԶԼՄ-ներից և ՀԿ-ներից եղել են թվով 26-ը, որոնց բոլորին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ: Անպատասխան մնացած հարցումներ չկան:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

## 2. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2015թ. կատարած աշխատանքների և 2016թ. հիմնախնդիրների մասին

/Զեկ.՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

| | |
|---|---|
| վարելահող | -25588.4 հա |
| բազմամյա տնկարկներ | – 1902.2 հա, որից՝ |
| խաղողի այգիներ | -1198.1հա, |
| պտղատու այգիներ | -704.1 հա |
| խոտհարքներ | – 9401.3 հա |
| արոտավայրեր | – 63065.6 հա |
| այլ | – 10805.4 հա |

Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան

բազմամյա տնկարկներ – 2030.8 հա ,որից՝
խաղողի այգիներ -158.9հա,
պտղատու այգիներ -1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: 18377.7 հա փաստացի վարելահողից 2015թ. ցանքի տակ է դրվել 16468 հա կամ 90 % /+986 հա նախորդ տարվա համեմատ/:

Նախատեսվում է 2016թ.ցանքատարածությունները հասցնել 17940 հա-ի կամ 97.6 % /+1472 հա նախորդ տարվա համեմատ/:

| h/h | Մշակաբույսեր | 2016թ. /հա/ | 2015թ. /հա/ | +/- /հա/ |
|---|---|---|---|---|
| 1 | **Ընդամենը հացահատիկային և հատիկաընդեղենային,այդ թվում՝** | **10773** | **10030** | **+743** |
| | Ընդամենը ցորեն, | 6150 | 5734 | +416.0 |
| | որից՝ | 6150 | 5734 | +416.0 |
| | աշնանացան | 0 | 0 | 0 |
| | գարնանացան | 1795 | 1675 | +120.0 |
| | Ընդամենը գարի, | 1416 | 1306 | +110 |
| | որից՝ | 379 | 369 | +10 |
| | աշնանացան | 20 | 16 | +4 |
| | գարնանացան | 2025 | 1925 | +100 |
| | Այլ հացահատիկ | 783 | 680 | +103 |
| | Եգիպտացորեն | | | |
| | Հատիկաընդեղեն | | | |
| 2 | **Տեխնիկական մշակաբույսեր** | **1237** | **951** | **+286** |
| 3 | **Կարտոֆիլ** | **2080** | **1996** | **+84** |
| 4 | **Բանջարեղեն** | **1260** | **1144** | **+116** |
| | որից՝ լոլիկ | 240 | 219 | +21 |
| 5 | **Պարենային բոստան** | **125** | **107** | **+18** |
| 6 | **Կերային մշակաբույսեր/ներառյալ անցած տարիների բազմամյա խոտերի ցանքը/** | **2465** | **2240** | **+225** |
| | ***Ընդամենը ցանք*** | ***17940*** | ***16468*** | ***+1472*** |

Բոլոր մշակաբույսերի գծով 2015թ. նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է համախառն բերքի աճ:

| հ/հ | Ցուցանիշի անվանումը | 2014թ. /տոննա/ | 2015թ. /տոննա/ | +/- /տոննա/ | % |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն | 35538 | 37996 | +2458 | 107 |
| 2 | Կարտոֆիլ | 23659 | 25178 | +1519 | 106 |
| 3 | Բանջարեղեն | 12008 | 13510 | +1502 | 113 |
| 4 | Բոստան | 2701 | 3157 | +456 | 117 |
| 5 | Տեխնիկական մշակաբույսեր | 1424 | 1454 | +30 | 102 |
| 6 | Պտուղ, հատապտուղ | 10303 | 15358 | +5055 | 149 |
| 7 | Խաղող | 14584 | 16738 | +2154 | 115 |
| 8 | Խոտ | 65561 | 70577 | +5016 | 108 |

2015թ. մթերվեց 7884 տոննա խաղող 2014թ. 7525 տոննայի դիմաց /+359 տոննա/: Ամբողջությամբ մթերվեց գյուղացիական տնտեսությունների մթերման ենթակա խաղողը՝ 1 կգ-ը 120-140 դրամով:

Մարզի Այգեձորի <<Էկոգարդեն>> ՍՊԸ-ի, <<Իջևանի գինու,կոնյակի գործարան>> ԲԲԸ-ի, Ջուջևանի <<Արթուր և Էդիտա>> ՍՊԸ -ի և Բագրատաշենի <<Վիվա ֆրուիթ>> ՍՊԸ-ի կողմից 2015թ.մթերվել է 829 տոննա պտուղ-բանջարեղեն 2014թ.395.3 տոննայի դիմաց /+433.7 տոննա/:

2015թ.աշնանը մարզի 38 համայնքի տրամադրվել է 515 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու /նախորդ տարվա 457 տոննայի դիմաց/՝ 2016 թ. բերքահավաքից հետո 1 կգ-ի համար 160 դրամ վճարելու պայմանով: Սերմացուն տրամադրվել է 2107 հողօգտագործողի,որոնց կողմից կատարվել է 1717 հա աշնանացան:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի թիվ 59-Ն, թիվ 73-Ն և փետրվարի 2-ի թիվ 74-Ն որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզին հատկացվել է.

Գարնանացան գարու սերմացու -15 տոննա,իրացվել է ամբողջությամբ

առվույտի սերմացու - 2 տոննա, / հավաքագրվել է 144000 դրամ՝ 96 կգ/

ազոտական պարարտանյութ - 420 տոննա/ հավաքագրվել է 12 մլն. դրամ՝ 100 տոննա/
ֆոսֆորական պարարտանյութ - 5 տոննա/ հավաքագրվել է 175000 դրամ՝ 1.25 տոննա/
կալիումական պարարտանյութ - 5 տոննա/ հավաքագրվել է 147000 դրամ՝ 1.05 տոննա/
դիզելային վառելանյութ - 400000 լիտր / հավաքագրվել է 6 մլն.226920 դրամ՝ 22239 լիտր/:

Ընթացքի մեջ են գումարների հավաքագրման և վճարման աշխատանքները:

Մարզի տարածքում <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ>> շրջանակներում /հայկական միրգ/ 2015թ. հիմնվել է 14 հա ինտենսիվ պտղատու այգի/2014թ.8.3 հա-ի դիմաց/, որից՝

Պտղավանում - 8 հա կեռասի /կաթիլային ոռոգման համար ջրագիծը պատրաստ է, ընթացքի մեջ են համակարգի տեղադրման աշխատանքները, կան հակակարկտային ցանցեր/
Դեբեդավանում - 4.1 հա սալորի, 1.9 հա դեղձի:

Լուսահովիտ համայնքի վարչական տարածքում <<Գրին զոնն>> ՍՊԸ-ի կողմից հիմնվել է 4 հա ելակի այգի՝ հակակարկտային ցանցերով և կաթիլային ոռոգման համակարգով:
2015թ. ՕՔՍՖԱՄ-ի կողմից Տավուշի մարզում իրականացվող՝ "Փոքր ֆերմերների բարելավումը գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեշղթայի զարացման միջոցով" և "Ձեռնարկության զարգացում" ծրագրերի շրջանակներում Սևքար համայնքում հիմնվել է պահածոյացման արտադրամաս/ընդհանուր ներդրումը 12մլն.դրամ/, որը 2016թ.կսկսի մթերումները:
2014թ.ՕՔՍՎԱՄ Հայաստանի կողմից Տավուշի մարզում իրականացված <<Կայուն կենսապահովման >> ծրագրի շրջանակներում Այրում համայնքում հիմնված համայնքային վերամշակող գործարան՝ Այրումի <<Միրգ>> ՍՊԸ-ի վերազինման համար 2015թ.կատարվել է 5մլն.դրամի ներդրում:
<< կառավարության 02.07.2015թ.թիվ 766-Ն որոշմամբ մարզին հատկացված 28մլն. դրամով Նոյեմբերյանի տարածաշրջանի 6 համայնքներում տեղադրվել են 10 հատ հակակարկտային կայաններ:

Մարզի համայնքներում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնագլխաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

| Անվանումը | | 2015թ. | +/- |
|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր | 35915 | 37064 | -1149 |
| այդ թվում՝ կովեր | 16562 | 17504 | -942 |
| Խոզեր | 20069 | 16564 | +3505 |
| Ոչխարներ և այծեր | 17508 | 16910 | +598 |
| Մեղվաընտանիքներ | 21819 | 21757 | +62 |
| Թռչուններ | 207698 | 211061 | -3363 |

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:
Ինչպես 2015թ., 2016թ. ևս պետպատվերի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվելու կենդանիների 11 հիվանդությունների դեմ:
<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:
Մինչև 2015թ. ծրագրում ընդգրկված 13 համայնքներում ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ,որոնց կողմից ձեռք են բերվել համապատասխան գյուղմեքենաներ և գյուղգործիքներ,կատարվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման աշխատանքներ:
2015թ.ծրագրում ընդգրկվեցին և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին ևս 12 համայնքներում /Վարագավան, Վ.Ծաղկավան, Տավուշ,Արծվաբերդ,Չինարի,Մովսես,Իծաքար,Ն.Կ.Աղբյուր,Բերդ,Նորաշեն,Կոթի,Կողբ/:
Նշված համայնքների արոտավայրեր և խոտհարքներ տանող ճանապարհների վրա կատարվել են փոսալցումներ,Նավուրում կառուցվել են 6, Պառավաքարում 3 խմոցներ: 2014-2015թթ. Պառավաքարի

սպառողական կոոպերատիվի կողմից ձեռք է բերվել հացահատիկահավաք կոմբայն և թրթուրավոր տրակտոր գյուղգործիքներով, իսկ Չինչինի կողմից 1-ական թրթուրավոր և ՄՏՋ մակնիշի տրակտոր իր գյուղգործիքներով: 2015թ. Չինարիի, Վարագավանի, Տավուշի կոոպերատիվների կողմից ձեռք են բերվել 1-ական,իսկ Վ.Ծաղկավանի կողմից 2 հատ ՄՏՋ մակնիշի տրակտոր իր գյուղգործիքներով:

Ընթացքի մեջ են կոոպերատիվների կողմից գյուղմեքենաների և գյուղգործիքների ձեռք բերման աշխատանքները:

2015թ.ծրագրի շրջանակներում մարզի Բերդ համայնքում սկսվել են <<Տավուշի մարզի անասնաբուժական կենտրոնի կառուցման աշխատանքները:

Մարզի Բերդի տարածաշրջանում իրականացված «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ և արոտավայրերի կառավարում Տավուշի մարզում (Հայաստանի հյուսիս)» ծրագրի շրջանակներում շահառու Արծվաբերդ, Վերին Կարմիրաղբյուր, Չորաթան, Նորաշեն, Նավուր, Իծաքար, Չինչին, Տավուշ, Վ.Ծաղկավան համայնքներում 2014-2015թթ. իրականցվել են արոտավայրեր տանող ճանապարհների վերանորոգում /շուրջ 1,950հա համայնքամերձ արոտ հասանելի է դարձել համայնքների բնակիչների համար/, համայնքային արոտավայրերում կառուցվել են 39 հատ ջրելատեղեր,1 մակատեղ, Բերդ քաղաքում հիմնադրվել է կաթի վերամշակման կետ,որտեղ 2015թ. մթերվել է շուրջ 147 տոննա կաթ (Բերդի տարածաշրջանի 12 համայքներից):

Մարզում տոհմաբուծարաններ չկան, իսկ արհեստական սերմնավորման կայանը լուծարվել է: <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում 2015թ. մարզի Բերդ համայնքում սկսվել են <<Տավուշի մարզի անասնաբուժական կենտրոնի կառուցման աշխատանքները: Կենտրոնը շահագործվելու է 2016թ. և իրականացնելու է նաև կենդանիների արհեստական սերմնավորում:

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում որպես տոհմային կորիզ բուծվում են Եվրոպայից ներկրված <<Սիմենթալ>>,<<Ջերսեյ>> ցեղերի խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մատղաշները անասնապահական համալիրում կառուցված հորթանոցում պահվում են խմբակային կարգով: Որպես մայրացու էգ հորթերը տրամադրվել են Կիրանց, Նավուր, Արծվաբերդ/2015թ./, Գանձաքար/2015թ./, Գոշ/2015թ./ համայնքներում ստեղծված կոոպերատիվներին, որոնց ստացիոնար պահվածքը իրականացվում է <<ՀիմնաՏավուշ>> զարգացման հիմնադրամի կողմից կառուցված մինի-ֆերմաներում: Ավարտվել են Կողբի ֆերմայի կառուցման աշխատանքները:

**<u>Առաջարկվեց.</u>**

**<u>Համայնքների ղեկավարներին.</u>**

1. Շարունակել պետական աջակցության ծրագրերով հողօգտագործողների համար նախատեսված առվույտի սերմացուի, դիզվառելիքի և պարարտանյութերի համար գումարների հավաքագրման և վճարման գործընթացը:
2. Ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ "Հայաստանի Հանրապետությունում 2010-2014թթ. Ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման" ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց չվճարած գումարների հավաքագրումն ավարտելու ուղղությամբ:

**<u>Հանձնարարվեց.</u>**

**Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին.**

1. Համայնքների ղեկավարներին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպչական օգնություն և իրականացնել հսկողություն՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքները /պտղատու և խաղողի այգիներում էտ և ձևավորում, ցանք և այլն/ ժամանակին կատարելու ուղղությամբ:

Վերջում նախարար Ս.Կարապետյանը պատվոգրերով և մեդալներով պարգևատրեց.

ՊԱՏՎՈԳՐԵՐ

Բայրամյան Վաղարշակ Վարշամի - գ.Սարիգյուղ, <<Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվի նախագահ

Կարապետյան Արսեն Սերյոժայի - գ.Բաղանիս, <<Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվի նախագահ

Նիգոյան Միհեր Արշալույսի - գ.Նավուր, <<Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվի նախագահ

Բեջանյան Լուսինե Ջիվանի - գ.Լճկաձոր, <<Դեբեդ>> կանանց սպառողական կոոպերատիվի նախագահ /ջերմոց/

Չատյան Ալվարդ Վլադիմիրի - գ.Հովքի կանանց սպառողական կոոպերատիվ /ջերմոց/

Աչինյան Արմեն Վիկտորի - գ.Այգեհովիտ, խաղողագործություն

Մարդանյան Հրաչյա Հայկազի - գ.Պառավաքար, խաղողագործություն

Սիմոնյան Արծրուն Սևանի - գ. Վ.Ծաղկավան, անասնապահություն

Եղիկյան Սասուն Համազասպի - գ. Վարագավան, անասնապահություն

Զարգարյան Զոհրակ Կամոյի - գ. Արծվաբերդ, անասնապահություն

ՄԵԴԱԼ

1. Աբրահամյան Գոռ Վազգենի - Նորաշենի գյուղապետ
2. Ղազարյան Արթուր Դավիթի - Վ.Ծաղկավանի գյուղապետ

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ